

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
վիճակագրության պետական խորհրդի
2020 թվականի սեպտեմբերի 2-ի թիվ 26-Ա որոշմամբ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ (ԱՐՄՍՏԱՏ)

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
Ա Ր Մ Ս Տ Ա Տ Ի
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ
ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ - 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Ներածություն	4
1.	ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԻԵՐԸ	5
1.1.	Ընդհանուր դրույթներ	5
1.2.	Տարածման սահմանումը	6
1.3.	Պաշտոնական վիճակագրություն	7
1.4.	Վիճակագրության ոլորտները	8
1.5.	Տեղեկատվության, ծառայությունների և հրապարակումների տնօրինումը	8
1.6.	Վիճակագրական տեղեկատվության հասանելիություն և մատչելիություն	9
1.7.	Տարածման հիմնական միջոցները	9
1.8.	Տվյալների օգտագործումը	10
1.9.	Վիճակագրության տարածման սկզբունքները	11
1.10.	Անհատական տվյալներ	12
1.11.	Վիճակագրական տվյալների համեմատություններ	12
1.12.	Բաց դռների օր	12
1.13.	ԱՐՄՍՏԱՏ-ի արտաքին նույնականացումը	13
1.14.	Օգտագործողների (օգտագործողների) ընդգրկում և հետադարձ կապ: Օգտագործողների հետ համագործակցություն, հարցաթերթ	13
2.	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ	15
2.1.	Տեղեկատվության հրապարակման նախապատրաստման ընթացակարգը	15
2.2.	Պաշտոնական վիճակագրության հասանելիությունը մինչև հրապարակումը	16
2.3.	Վիճակագրական ցուցանիշների թողարկման օրացույց	16
2.4.	Վիճակագրական հրապարակումների օրացույց	17
2.5.	Վիճակագրական հրապարակումների համացանկ	17
2.6.	Վիճակագրական հրապարակման կասեցումը	18
2.7.	Նախնական և վերջնական տվյալների հրապարակումը	18
2.8.	Վիճակագրական տվյալների հրապարակման հետաձգումը	18
2.9.	Հրապարակված սխալների հայտնաբերման, ուղղման և ճշգրտման գործընթացը	19
2.10.	Հայտնաբերված և ուղղված սխալների մասին տեղեկացումը օգտագործողներին	20
2.11.	Վիճակագրական ցուցանիշների վերանայման քաղաքականությունը և վերանայման գործընթացը ԱՐՄՍՏԱՏ-ում	20
3.	ԱՐՄՍՏԱՏ-Ի ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ	22
3.1.	Վիճակագրական հրապարակումների տեսակները	22
3.2.	Վիճակագրական հրապարակումների թողարկման հաստատումը	23
3.3.	Վիճակագրական հրապարակումների ձևաչափը	23
3.4.	Վիճակագրական հրապարակումների թողարկման ժամկետների և ճշտապահության պատասխանատվությունը	23

3.5.	Տվյալներ այլ հաստատություններից	24
3.6.	Միջազգային համադրումներ	25
3.7.	«Հայաստանի վիճակագրական տարեգիրք»	26
3.8.	Տեղեկատվական ամսական զեկույց	26
3.9.	Վիճակագրական տեղեկագիր	27
3.10.	Վիճակագրական զեկույց (ներառյալ վերլուծական)	27
3.11.	Մամուլի հաղորդագրություն	28
3.12.	Նախնական արդյունքների հրապարակումներ	29
3.13.	Վիճակագրական հաշվետվություններ	29
3.14.	Մեթոդաբանական ուղեցույցներ, ձեռնարկներ	29
3.15.	Վիճակագրական հետազոտություններ	30
3.16.	Հատուկ թողարկումներ	30
3.17.	Չծրագրված թողարկումներ	30
3.	ԱՐՄՍՍԱՏ-Ի ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ	31
4.	ՏՎՅԱԼՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԵՋ	32
4.1.	Տեղեկատվության/տվյալների հարցումը (պահանջը)	32
5.	ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄԸ	32
5.1.	Վիճակագրական տեղեկատվության տարածման բաժին	32
5.2.	ԱՐՄՍՍԱՏ-ի բաց գրադարան	34
5.3.	ԱՐՄՍՍԱՏ-ի վիճակագրական հրատարակությունների պահպանում, ԱՐՄՍՍԱՏ-ի արխիվ	35
6.	ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՊԱՏՈՒՀԱՆ	35
6.1.	ԱՐՄՍՍԱՏ-ի տեղեկատվական կենտրոն-ընդունարան	35
7.	ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ	35
	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	36

Ներածություն

Պաշտոնական վիճակագրությունը, օրենքով լիազորված մարմինների կողմից պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքների պահանջներին համապատասխան, հանրային կյանքի էական և չափակցելի երևույթների թվային արտահայտությամբ մշակված, արտադրված և տարածված, բացառապես վիճակագրական ծրագրերում արտացոլված վիճակագրությունն է, որը ներկայացուցչական հիմքով նկարագրում է ՀՀ տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և բնապահպանական երևույթները:

Ազատական տնտեսակարգ ունեցող երկրների ազգային վիճակագրական ծառայություններում, այդ թվում նաև ԱՐՄՍՍՍՍ-ում, աճել է վիճակագրական տվյալների առավել լայն տարածման և հաղորդակցության անհրաժեշտությունը: Եվ որպեսզի շարունակականորեն ընդլայնվի վիճակագրական տեղեկատվության տարածումը, ինչպես նաև բարելավվի վերջինիս որակն ու օգտագործման հարմարավետությունը, անհրաժեշտ է ունենալ տարածման հստակ քաղաքականություն, այդ թվում նաև հետագա զարգացման ընդհանուր, առավել մանրամասնեցված ծրագրեր, գործողություններ և տարածման գործընթացի տարբեր ուղղությունների համար ուղեցույցներ:

Տեղեկատվության տարածման և հաղորդակցության ոլորտում քաղաքականության մշակումը և գործնականում իրականացումը ոչ թե ինքնաբուխ, այլ երկարատև և ոչ դյուրին գործընթաց է:

Վերոնշյալի անհրաժեշտությունը բխում է նաև «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքից, որտեղ հստակ սահմանվել են ՀՀ ազգային վիճակագրական համակարգի ձևավորման, պաշտոնական վիճակագրության մշակման, արտադրման և տարածման, համատարած հաշվառումների անցկացման հետ կապված հարաբերությունները:

Երկրում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական վերափոխումները սկզբունքային անհրաժեշտություն են առաջացրել վիճակագրական տեղեկատվության օգտագործողներին (հետայսու՝ օգտագործողներին) ապահովելու առավել ճշգրիտ, արժանահավատ և ժամանակի չափանիշներին համապատասխանող վիճակագրական հրապարակումներով:

Վիճակագրական համակարգի կարևորագույն նպատակը և գործունեության իմաստն առկա ու հետագա օգտագործողի պահանջները բավարարելն է, նրանց շուկայի պահանջարկին համապատասխանող վիճակագրական արտադրանքի տրամադրումը:

Վիճակագրական համակարգի զարգացումը վիճակագրական տեղեկատվության արտադրողների և օգտագործողների միջև հաստատուն երկխոսություն է և համալիր գործընթաց:

1.ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՐԸ

1.1.Ընդհանուր դրույթներ

ԱՐՄՍՍԱՏ-ի առաքելությունն է՝ հանրության համար պաշտոնական վիճակագրության մշակումը, արտադրությունը և տարածումը:

ԱՐՄՍՍԱՏ-ը ՀՀ կառավարությանը ենթակա պետական մարմին է, որն իր լիազորություններն իրականացնելիս անկախ է, ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ միջազգային պայմանագրերով, «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքով և այլ իրավական ակտերով:

ԱՐՄՍՍԱՏ-ը որոշակի քաղաքական ուղղվածությամբ պետական ինստիտուտներից արմատապես տարբերվող պետական մարմին է: Քաղաքական, վարչական, գերատեսչական շահերի միջև առկա բախումներում պաշտոնական վիճակագրությունը չներքաշելու երաշխիքները սահմանված են պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքներով:

2000թ.-ից ԱՐՄՍՍԱՏ-ը ձեռք է բերել հանրային շահին ուղղված գործառույթներ իրականացնող պետական մարմնի կարգավիճակ, որն իր խնդիրներն իրականացնելիս անկախ է այլ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, իսկ 2018թ. ապրիլի 9-ից ուժի մեջ մտած «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի համաձայն՝ իր լիազորություններն իրականացնելիս ունի անկախ պետական մարմնի կարգավիճակ:

Օգտագործողները բաշխված են 10 հիմնական խմբերում: Նրանք պետական կառավարման ոլորտի, ֆինանսական կազմակերպությունների, գործարար համայնքի, արհմիությունների, լրատվամիջոցների, քաղաքացիական հանրության (հասարակական կազմակերպություններ, անհատներ), հետազոտական և գիտակրթական հաստատությունների, միջազգային կազմակերպությունների, այլ օգտագործողների խմբերի ներկայացուցիչներն են:

ԱՐՄՍՍԱՏ-ը ՀՀ տարածքում համակարգում և իրականացնում է պաշտոնական վիճակագրությունը՝ Տարեկան ծրագրով նախատեսված վիճակագրական աշխատանքները:

Տարեկան ծրագիրը մշակվում է օգտագործողների պահանջարկի ուսումնասիրության հիման վրա: Այն ներառում է վիճակագրական աշխատանքների (ցուցանիշների) ցանկը, դրանց տրամադրման հաճախականությունը, հրատարակվելիք վիճակագրական հրապարակումների ցանկը և հաճախականությունը, օգտագործողների ցանկը, անվճար տրամադրվող տեղեկատվության կազմը, տրամադրման կարգը և այլն:

ԱՐՄՍՍԱՏ-ի կառավարման բարձրագույն մարմինը 7 անդամից բաղկացած ՀՀ վիճակագրության պետական խորհուրդն է (այսուհետ՝ Խորհուրդ), որն իրավասու է ընդունելու վիճակագրության բնագավառին առնչվող նորմատիվ բնույթի իրավական ուժ ունեցող ակտեր, հաստատում է Հնգամյա և Տարեկան վիճակագրական ծրագրերը (այսուհետ՝ Հնգամյա ծրագիր և Տարեկան Ծրագիր):

Վիճակագրական տեղեկատվության տարածման և հաղորդակցության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքով, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև այլ իրավական ակտերով:

Խորհուրդն ԱՐՄՍՍՍՍ-ի և պաշտոնական վիճակագրության այլ արտադրողների համար սահմանում է թափանցիկ ընթացակարգերով ազգային վիճակագրական համակարգում կիրառման համար համակարգված տարածման քաղաքականությունը և պաշտոնական վիճակագրության տարածման համար մեկ ընդհանուր տերմինաբանություն:

Խորհրդի, ԱՐՄՍՍՍՍ-ի նախագահի և պաշտոնական վիճակագրության այլ արտադրողների պաշտոնական վիճակագրության համար ռազմավարական նշանակություն ունեցող հարցերի մասով՝ հասարակական հիմունքներով գործող հիմնական խորհրդատվական մարմինը Պաշտոնական վիճակագրություն օգտագործողների հանրային խորհուրդն է (այսուհետ՝ Հանրային Խորհուրդ):

1.2.Տարածման սահմանումը

Վիճակագրական հրապարակման տարածումը (լույս ընծայումը)՝ հեղինակային իրավունքի իրավատիրոջ համաձայնությամբ վիճակագրական տեղեկատվության շրջանառության մեջ մտցնելն է, եթե վերջինիս մատչելիությունը բավարարում է հասարակության պահանջները:

Վիճակագրական տեղեկատվության տարածումը ներառում է բազմաբնույթ գործողությունների կատարում էլեկտրոնային և թղթային եղանակներով, փոստի, հեռախոսի, գրադարանի, համացանցի, էլեկտրոնային կրիչների, մամուլի ասուլիսների, շնորհանդեսների, գիտական և այլ բնույթի համաժողովների միջոցով վիճակագրության մեթոդաբանության (մեթատվյալների), վիճակագրական տվյալների և վիճակագրական հրապարակումների (ժողովածուներ, զեկույցներ և այլն) տարածումը:

«Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի համաձայն, պաշտոնական վիճակագրությունը տարածվում է ստույգ ժամանակին՝ պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքներով ամրագրված հիմնարար սկզբունքներին համապատասխան:

ԱՐՄՍՍՍՍ-ը և պաշտոնական վիճակագրության այլ արտադրողները կազմում և հրապարակում են տվյալների տարածման նախնական օրացույց, որում նշվում են պաշտոնական վիճակագրական տվյալների տարածման նախատեսված ամիսը և ամսաթիվը: Տվյալների տարածման նախնական օրացույցից ցանկացած շեղման մասին հասարակությունը տեղեկացվում է մինչև նախատեսված տարածման օրը: Տարածման նոր ամսաթիվը հաստատվում և հրապարակվում է ողջամիտ ժամկետում:

Պաշտոնական վիճակագրության տարածումն ուղեկցվում է մեթատվյալներով և բացատրական մեկնաբանություններով, իսկ հասանելիությունն ապահովվում է վիճակագրական կոմիտեի և պաշտոնական վիճակագրության այլ արտադրողների պաշտոնական կայքերում հրապարակվելու միջոցով:

Տարածման ժամանակ պաշտոնական վիճակագրությունը և այլ վիճակագրական տվյալները հստակ տարանջատվում են:

Տարածված պաշտոնական վիճակագրության մեջ հայտնաբերված սխալները ենթակա են ուղղման, իսկ ուղղումները հրապարակվում և հաղորդվում են օգտագործողներին հնարավորինս սեղմ ժամկետում:

Օգտագործողներն իրավունք ունեն օգտագործելու պաշտոնական վիճակագրությունը և համապատասխան մեթատվյալներն իրենց արտադրանքում՝ նշելով տվյալների աղբյուրը:

Վիճակագրական տվյալների նախնական թողարկումները, որոնք հետագայում ենթակա են վերանայման պաշտոնական վիճակագրություն արտադրողների կողմից, հստակ մատնանշվում են որպես այդպիսին:

Մեթոդաբանական փոփոխություններով պայմանավորված էական վերանայումների վերաբերյալ տեղեկատվությունը հանրությանը հասցվում է ողջամիտ ժամկետներում:

Վիճակագրական տեղեկատվությունը պետք է հասանելի լինի ողջ հանրությանը: Այն պետք է հասկանալի ու մատչելի լինի ոչ միայն մասնագետներին, այլ նաև նրանց համար, ովքեր չունեն համապատասխան գիտելիքներ:

Տեղեկատվության տարածման և հաղորդակցության գործընթացը պայմանավորված է պաշտոնական վիճակագրության հստակ մշակված ռազմավարությամբ, որակավորված մասնագետներով և տեղեկատվատեխնոլոգիական ապահովվածությամբ:

Վիճակագրության կարևորագույն նպատակներից մեկը օգտագործողներին իրենց պահանջարկին համապատասխանող վիճակագրական արտադրանք տրամադրելն է: Վիճակագրության կատարելագործման առաջնահերթ ուղղություններից մեկը վիճակագրական տեղեկատվության տարածման և հաղորդակցության փորձի և դրա վարման քաղաքականության նորացումն ու այդ բնագավառում նոր մոտեցումների կիրառումն է:

Արդի տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները հնարավորություն են ընձեռում հաշվի առնել օգտագործողների պահանջմունքների ավելի լայն շրջանակ: Սակայն այդ բնագավառում ԱՐՄՍՍՍ-ն, ինչպես և ցանկացած երկրի վիճակագրական ծառայություն, անխուսափելիորեն բախվում է ռեսուրսների (ֆինանսական, կադրային և այլն) իրական սահմանափակումներին:

1.3. Պաշտոնական վիճակագրություն

Հայաստանի Հանրապետությունում ԱՐՄՍՍՍ-ն այն կառույցն է, որը լիազորված է իրականացնել պաշտոնական վիճակագրական գործունեություն:

Պաշտոնական վիճակագրության այլ արտադրողներ են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների այն կազմակերպական ստորաբաժանումները, որոնք բացառապես կամ հիմնականում զբաղվում են պաշտոնական վիճակագրության մշակմամբ, արտադրմամբ և տարածմամբ:

Վիճակագրական տեղեկատվությունն իրենից ներկայացնում է տվյալների բազա և հանդիսանում հեղինակային իրավունքի օբյեկտ: Վիճակագրական տեղեկատվությունը համարվում է պաշտոնական, եթե այն հրապարակված է.

- ԱՐՄՍՍԱՍ-ի կողմից,
- ԱՐՄՍՍԱՍ-ի տարածքային և գործառնական միավորների կողմից,
- պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ ԱՐՄՍՍԱՍ-ի կողմից հրապարակված տեղեկատվության հիման վրա:

ԱՐՄՍՍԱՍ-ի կողմից հրապարակված ողջ վիճակագրական տեղեկատվությունը պաշտոնական է՝ անկախ տարածման եղանակից (թղթային, էլեկտրոնային, լրատվամիջոցներով և այլ):

ԱՐՄՍՍԱՍ-ի կողմից հրապարակված վիճակագրական հրապարակումների հեղինակային իրավունքը պատկանում է ԱՐՄՍՍԱՍ-ին և այդ հարաբերությունները կարգավորվում են հեղինակային իրավունքի ոլորտի օրենսդրությամբ:

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, ներառյալ Կենտրոնական բանկը, իրականացնում են ճյուղային (գերատեսչական) և տեղական (համայնքային) հաշվառում (վիճակագրություն) վարչական ռեգիստրների վարման միջոցով:

Վարչական ռեգիստրները ներառում են վիճակագրական տեղեկություններ տրամադրողների կողմից ԱՐՄՍՍԱՍ-ին ներկայացվող անհրաժեշտ ցուցանիշները, որոնք պաշտոնական վիճակագրական և վարչական դիտարկումների միջոցով հավաքված տվյալների (տեղեկությունների) ամբողջության հետ կազմում են ՀՀ պաշտոնական վիճակագրական տեղեկատվության միասնական համակարգը:

Վարչական վիճակագրություն իրականացնող մարմիններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով հրապարակում են իրենց կողմից իրականացրած տեղեկատվական գործառնությունների (վարչական բնույթի դիտարկումների) արդյունքները (գերատեսչական և համայնքային տեղեկատվություն)՝ նշելով սկզբնաղբյուրը:

1.4.Վիճակագրության ոլորտները

Պաշտոնական վիճակագրությունը ներառում է հետևյալ սոցիալ-տնտեսական հատվածները (ոլորտները, ենթաօլորտները) .

- ✓ մակրոէկոնոմիկա և ֆինանսներ,
- ✓ միկրոէկոնոմիկա և տնտեսական գործունեության տեսակներ,
- ✓ ժողովրդագրություն և սոցիոլոգիական ոլորտ,
- ✓ բնապահպանություն:

Երբեմն լինում են բացառություններ և տեղեկատվությունը ներառված չի լինում նշվածներից և որևէ մեկի մեջ:

1.5.Տեղեկատվության, ծառայությունների և հրապարակումների տնօրինումը

ԱՐՄՍՏԱՏ-ի վիճակագրական տեղեկատվության տնօրինումը՝ տարածման (ստացման) եղանակները, հետևյալն են.

- ✓ փոստ,
- ✓ էլեկտրոնային փոստ,
- ✓ հեռախոս,
- ✓ համացանց,
- ✓ ԱՐՄՍՏԱՏ-ի բաց գրադարան,
- ✓ մամուլի ասուլիսներ, հանդիպումներ,
- ✓ այլ:

Վիճակագրական տվյալներն ամփոփվում են.

- ✓ վիճակագրական հրապարակումներում (տպագիր կամ էլեկտրոնային),
- ✓ վիճակագրական տվյալների բազաներում,
- ✓ ԱՐՄՍՏԱՏ-ի պաշտոնական կայքերում,
- ✓ վիճակագրական հարցումների պատասխան-գրություններում,

Մատուցվող ծառայություններ.

- ✓ ԱՐՄՍՏԱՏ-ի պաշտոնական կայքերում վիճակագրական տվյալներ, հրապարակումներ և այլն,
- ✓ գրավոր կարգով արդեն իսկ հրապարակված տվյալներին առնչվող արագ պատասխան,
- ✓ ԱՐՄՍՏԱՏ-ի աշխատակցի կողմից պատրաստված տվյալների պատասխան՝ պահանջարկին համապատասխան,
- ✓ տվյալների հասանելիություն ԱՐՄՍՏԱՏ-ի բաց գրադարանի միջոցով,
- ✓ սոցիալական ցանցերով հարցումների առցանց պատասխան:

1.6.Վիճակագրական տեղեկատվության հասանելիություն և մատչելիություն

Վիճակագրական տեղեկությունը հավասարապես և միաժամանակ մատչելի է վիճակագրական տեղեկատվության բոլոր օգտագործողներին, հաշվի առած «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքով և այլ օրենքներով սահմանված սահմանափակումները, մասնավորապես վիճակագրական գաղտնիքի դրույթը և այլն:

Վիճակագրական տեղեկատվության մատչելիությունն ապահովելու նպատակով երկրի սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող վիճակագրական տեղեկատվությունը տարածվում է (անվճար) օգտագործողներին, այդ թվում մամուլի հաղորդագրությունների տեսքով՝ համաձայն Տարեկան ծրագրում նշված ժամանակացույցի:

ԱՐՄՍՏԱՏ-ն ապահովում է ՀՀ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին համապատասխան վիճակագրական տեղեկատվության տրամադրումը միջազգային (միջպետական, միջկառավարական) կազմակերպություններին և օտարերկրյա պետություններին, ինչպես նաև տվյալ տարվա ընթացքում ձեռքբերված պայմանավորվածությունների հիման վրա նոր հետազոտությունների և այլ վիճակագրական աշխատանքների իրականացումը:

1.7.Տարածման հիմնական միջոցները

Վիճակագրական տեղեկատվության տարածման և հաղորդակցության հիմնական միջոցը ԱՐՄՍՏԱՏ-ի պաշտոնական կայքերն են՝ <http://www.armstat.am> և <http://www.armstatbank.am>, ինչպես նաև այլ հարթակներ (օրինակ՝ <http://microdata.armstat.am/index.php/home> և <http://sdg.armstat.am/am/>):

ԱՐՄՍՏԱՏ-ի գրեթե բոլոր վիճակագրական հրապարակումներն էլեկտրոնային են, ունեն առնվազն մեկ օրինակ տպագիր (թղթային) տարբերակ և թողարկվում են տվյալ տարվա Տարեկան ծրագրին և դրանից բխող «Վիճակագրական հրապարակումների օրացույցին» համապատասխան (մեծամասամբ պաշտոնական կայքերում տեղադրվում են ժամը 12⁰⁰-ին):

Վիճակագրական հրապարակումների հետաձգումների մասին տեղյակ է պահվում նախօրոք և սահմանվում է հրապարակման նոր ամսաթիվ (տրվում է նաև բացատրություն հետաձգման պատճառների մասին):

1.8.Տվյալների օգտագործումը

ԱՐՄՍՏԱՏ-ի բոլոր վիճակագրական հրապարակումներն ունեն Տարեկան ծրագրով նախատեսված համապատասխան ծածկագիր:


Վիճակագրական հրատարակությունների պաշտոնական լեզուն հայերենն է: Ծրագրով նախատեսված, ինչպես նաև այլ անհրաժեշտ դեպքերում հրատարակություններն իրականացվում են նաև ռուսերեն և/կամ անգլերեն: Տարընթերցությունների առկայության դեպքում վերահսկիչ տարբերակը (օրինակը) հայերենն է:

Վիճակագրական հրապարակումներում հղումները կատարվում են ընթերցողներին տեղեկատվության սկզբնաղբյուրի հետ ծանոթացնելու նպատակով:

Երբ ԱՐՄՍՏԱՏ-ի պաշտոնական կայքերից օգտագործվում են վիճակագրական տվյալներ, գրաֆիկներ (գծապատկերներ), աղյուսակներ, դրանք պետք է հղումներ ունենան ԱՐՄՍՏԱՏ-ի պաշտոնական կայքերի համապատասխան հասցեին:

Վիճակագրական հրատարակությունը, որպես կանոն, պետք է պարունակի հետևյալ անհրաժեշտ տեղեկությունները.

- ✓ հրատարակության անվանումը,
- ✓ թողարկման պատասխանատուն,
- ✓ թողարկման հերթական համարը, ամսաթիվը,

- ✓ տպաքանակը, եթե հրատարակվելու է թղթային տարբերակով,
- ✓ ԱՐՄՍՍՍՍ-ի պատկերանշանը (լոգոն՝ ) ,
- ✓ հեղինակային իրավունքն օրենքով պաշտպանված լինելու մասին նշանը՝ ©,
- ✓ ԱՐՄՍՍՍՍ-ի պաշտոնական կայքի հասցեն՝ <http://www.armstat.am> ,
- ✓ հղումներ՝ այլ տվյալների բազաներից, հրատարակություններից, աղբյուրներից օգտվելիս (այդ նյութերի հեղինակային իրավունքի կրողի կողմից օգտագործման սահմանափակումներ կիրառելու դեպքում նախապես ստացվում է օգտագործման թույլտվություն),
- ✓ ճշգրտված տեղեկատվության համար առանձին հայտարարություն ԱՐՄՍՍՍՍ-ի պաշտոնական կայքում և/կամ տվյալ հրապարակման մեջ, համապատասխան ցուցանիշի վրա ճշգրտման նշանի (²) առկայություն (անհրաժեշտության դեպքում նաև տեղեկություն՝ հետագայում ճշգրտման ենթակա լինելու մասին, նշում նաև մեթոդաբանական պարզաբանումներում),
- ✓ երևույթի բացակայության պարագայում՝ « - » նշանի տեղադրում, հրապարակման պահին տվյալներ չլինելու դեպքում՝ «...»-ի, ցուցանիշի չնշին մեծության հանգամանքում՝ «0.0»-ի և ցուցանիշի չհաշվարկվելու դեպքում՝ «X» նշանի տեղադրում,
- ✓ առանձին դեպքերում բաղադրիչների գումարի և արդյունքի միջև աննշան տարբերությունները բացատրվում են տվյալների կլորացմամբ:

1.9.Վիճակագրության տարածման սկզբունքները

Պաշտոնական վիճակագրության բոլոր գործառույթների ծրագրավորումը խարսխված է պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքների (ընդունված՝ Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Եվրոպական տնտեսական հանձնաժողովի 47-րդ նստաշրջանում՝ ք.Ժնև, 15.04.1992թ., ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի՝ 14.04.1994թ. և ՄԱԿ-ի Գլխավոր Վեհաժողովի կողմից՝ թիվ 68/261 Բանաձև, 29.01.2014թ.) և դրանց հիման վրա մշակված վիճակագրության միջազգային չափանիշների ու ստանդարտների վրա («Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգիրք»՝ ընդունված Վիճակագրական ծրագրային կոմիտեի կողմից 2005թ. փետրվարի 24-ին, «Եվրոպական վիճակագրական համակարգի որակի հոչակագիր», «Եվրոպական վիճակագրական համակարգի ստանդարտ, որակի հաշվետվությունների համար» Ձեռնարկ՝ Եվրոստատ, Լյուքսեմբուրգ, 2009թ., Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) «Տվյալների տարածման հատուկ ստանդարտ», Համաշխարհային բանկի«Վիճակագրական կարողությունների համաթիվ» և այլն):

Պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքներն են.

1. Նշանակալիություն, օբյեկտիվություն և մատչելիություն
2. Պրոֆեսիոնալ ստանդարտներ և էթիկա
3. Հաշվետվություն և թափանցիկություն
4. Սխալ օգտագործման կանխում
5. Պաշտոնական վիճակագրության աղբյուրներ
6. Գաղտնիություն
7. Օրենսդրություն
8. Ազգային համակարգում
9. Միջազգային ստանդարտների օգտագործում
10. Միջազգային համագործակցություն

Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքով սահմանված սկզբունքները

(տե՛ս <https://www.armstat.am/file/doc/99508963.pdf> հղումը)

1. Պրոֆեսիոնալ անկախություն,
 - 1.1. Համակարգում և համագործակցություն,
2. Մանդատ փվյալների հավաքագրման համար,
3. Ռեսուրսների համապատասխանություն,
4. Որակի հանձնառություն,
5. Վիճակագրական գաղտնիություն,
6. Անկողմնակալություն և օբյեկտիվություն,
7. Հիմնավորված մեթոդաբանություն,
8. Համապատասխան վիճակագրական ընթացակարգեր,
9. Ռեսպոնդենտների չափավոր ծանրաբեռնվածություն,
10. Ծախսերի արդյունավետություն,
11. Համապատասխանություն,
12. Ճշգրտություն և արժանահավատություն,
13. Յուրաժամանակություն և ճշտապահություն,
14. Համաձայնեցվածություն և համադրելիություն,
15. Մատչելիություն և պարզություն:

1.10. Անհատական տվյալներ

Անհատական տվյալները հավաքվում են հատուկ սահմանված կամ հայտարարված օրինական նպատակների համար և չեն կարող օգտագործվել այլ նպատակներով, բացառությամբ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Անհատական տվյալների պահանջները կարող են լինել գաղտնի (գիտական աշխատանքների համար), այսպիսի տեղեկատվության տրամադրումից հետո օգտագործողը պարտավորվում է ոչնչացնել ստացված տեղեկատվությունը:

Պետք է կնքվի համապատասխան պայմանագիր (հուշագիր) անհատի և ԱՐՄՍՍԱՍ-ի միջև, համաձայն որի ֆինանսական և իրավական պայմանագրի (հուշագրի) կետերի խախտման դեպքում խախտողը կարող է ենթարկվել պատասխանատվության:

ԱՐՄՍՍԱՍ-ի յուրաքանչյուր ստորաբաժանում իր գործունեության շրջանակում պետք է սահմանի իր կանոններն ու սկզբունքներն ավելի մանրամասն և յուրահատուկ, թե որ տվյալները չպետք է միասին խմբավորվեն:

1.11.Վիճակագրական տվյալների համեմատություններ

Վիճակագրությունում մեծ նշանակություն ունեն վիճակագրության տվյալ ոլորտի ցուցանիշների տարբեր ժամանակահատվածների շարժընթացում ներառված տվյալների համեմատությունները (համադրումները), ինչը հնարավորություն է ընձեռում օգտագործողին բացահայտելու սոցիալական և տնտեսական տարաբնույթ գործընթացներ:

1.12.«Բաց դռների օր»

Վիճակագրական տվյալների տարածման և հաղորդակցության քաղաքականության կարևորագույն ուղղություններից է սեմինարների, դասընթացների երկխոսությունների միջոցով գիտելիքի փոխանցումը: ԱՐՄՍՍԱՍ-ում «Բաց դռների օրեր» կազմակերպվում են լայն հասարակության՝ մասնավորապես թիրախային խմբերի, տարբեր հաստատությունների ներկայացուցիչների համար:

ԱՐՄՍՍԱՍ-ը յուրաքանչյուր տարվա կտրվածքով իր ներքին և արտաքին օգտագործողների համար ծրագրում, մշակում և կազմակերպում է ուսուցողական սեմինար-պարապմունքներ, որոնք իրականացվում են դիտարկվող տարվա համար նախատեսված որոշակի օրը (սովորաբար՝ ամսվա երկրորդ շաբաթվա չորեքշաբթի օրը, ժամը 12⁰⁰-13⁰⁰):

ԱՐՄՍՍԱՍ-ն, ըստ անհրաժեշտության, կարող է իրականացնել նաև արտահերթ թեմատիկ ուսուցողական պարապմունքներ:

Օգտագործողների խմբերն ինչպես ԱՐՄՍՍԱՍ-ի ներքին օգտագործողներն են (կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ներկայացուցիչներ), այնպես էլ արտաքին օգտագործողները (պետական կառավարման մարմիններ, ֆինանսական կազմակերպություններ, գործարար համայնք, արհմիություններ, լրատվամիջոցներ, քաղաքացիական հասարակություն (հասարակական կազմակերպություններ, անհատներ), հետազոտական հաստատություններ, գիտակրթական հաստատություններ, միջազգային կազմակերպություններ և այլն):

Հատուկ թիրախային (ֆոկուս) խումբ են համարվում զանգվածային լրատվամիջոցները, որոնց համար կազմակերպվում են հասարակական հետաքրքրություն ներկայացնող վիճակագրական որևէ նյութի շուրջ ուսուցողական դասընթացներ: Մեծ է հավանականությունը, որ

հաղորդակցման և/կամ շփման ծավալման գործընթացում նրանց ուսուցողական դասընթացը կվերաձվի մամուլի ասուլիսի, ուստի այդ դասընթացները պետք է կազմակերպվեն այնպես, որ տվյալ թեման ներկայացնող մասնագետը մինչև վերջ կարողանա ապահովել բուն նյութի ծրագրված, ըմբռնելի ձևաչափով, ամբողջական մատուցումը: Սեմինարի արդյունքում ստացված գիտելիքները պետք է նպաստեն նրանց հետագա գործունեությանը՝ վիճակագրական տեղեկատվության անաչառ, օբյեկտիվ և չխեղաթյուրված վերարտադրման ու մեկնաբան համար:

Լրագրողների հարցումներին պատասխանում են ԱՐՄՍՍԱՍ-ի համապատասխան ստորաբաժանումների ղեկավարները: Եթե հարկավոր է հաստատում, դա պետք է անի ԱՐՄՍՍԱՍ-ի նախագահը կամ նրա կողմից լիազորված անձը:

Վիճակագրական տեղեկատվության հրապարակման ժամանակ շատ կարևոր է հաշվի առնել, որ լսարանում միայն վիճակագրության մասնագետներ չեն, և որ տեղեկատվությունը պետք է հասկանալի (մատչելի) լինի բոլորին:

Լրագրողները շատ հաճախ չեն օգտագործում իրենց տրամադրված ամբողջական տեղեկատվությունը՝ օգտագործելով միայն այն հատվածը, որն իրենց կարծիքով կհետաքրքրի ընթերցողներին: Այդ իսկ պատճառով էլ չափազանց կարևոր է, որպեսզի լրատվամիջոցների և ԱՐՄՍՍԱՍ-ի միջև թյուրըմբռնումներ չլինեն:

Օգտագործելով պաշտոնական վիճակագրության տվյալները՝ լրատվամիջոցները միշտ պետք է ԱՐՄՍՍԱՍ-ին նշեն որպես տեղեկատվության աղբյուր:

1.13.ԱՐՄՍՍԱՍ-ի արտաքին նույնականացումը

ԱՐՄՍՍԱՍ-ի բոլոր աշխատակիցները պետք է գործեն այնպես, որ նրանց աշխատանքը համապատասխանի գործող սկզբունքներին:

ԱՐՄՍՍԱՍ-ի բոլոր վիճակագրական հրապարակումները, ուղեցույցները և այլ նյութերը պետք է կազմված լինեն ԱՐՄՍՍԱՍ-ի վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի հետ համատեղ:

1.14. Օգտագործողների ընդգրկում և հետադարձ կապ: Օգտագործողների հետ համագործակցություն, հարցաթերթ

ԱՐՄՍՍԱՍ-ի քաղաքականության նպատակը օգտագործողների բավարարվածությունն է և նրանց կողմից վիճակագրության արդյունավետ կիրառումը, քանզի օգտակար է այն վիճակագրությունը, որն օգտագործվում է:

Վիճակագրական տվյալները չեն հրապարակվում արխիվի համար: Եթե վիճակագրությունը որոշումների կայացման գործիք չի հանդիսանում և չի օժանդակում սոցիալ-տնտեսական երևույթների համապատասխան ընկալմանը գերատեսչությունների և հասարակության կողմից, ապա այն չի կատարում իր հիմնական նպատակը:

Օգտագործողների հետ հետադարձ կապ ապահովելու ուղիներից մեկը թիրախային խմբերի հետ երկխոսությունների կազմակերպումն է:

Օգտագործողների որոշակի խմբերը, որոնք նախապես կազմվում են ԱՐՄՍՍԱՏ-ի կողմից, հրավիրվում են աշխատանքային հանդիպումների, որտեղ նրանք պատասխանում են ԱՐՄՍՍԱՏ-ի կողմից նախապես մշակված հարցերին և հաղորդակցվում միմյանց հետ:

Այդ խմբերի հետ շարունակական հանդիպումներն ԱՐՄՍՍԱՏ-ին հնարավորություն են ընձեռում հստակ պատկերացում կազմել նրանց առկա կարիքների և խնդիրների վերաբերյալ: Արդյունքում, ԱՐՄՍՍԱՏ-ը կարող է առավել արդյունավետ բավարարել նրանց վիճակագրական կարիքները:

Կարևոր է նաև, որ ԱՐՄՍՍԱՏ-ի պաշտոնական կայքերում վիճակագրական տեղեկատվությունը գետեղված լինի օգտագործողի տեսանկյունից հնարավորինս հարմարավետ և մատչելի, որպեսզի որոնման արդյունքում նվազագույն ժամանակ ծախսելով՝ հեշտությամբ որոնի և գտնի իրեն անհրաժեշտ տեղեկատվությունը:

ԱՐՄՍՍԱՏ-ի համար մշտապես անհրաժեշտ է դիտարկել, թե պաշտոնական կայքերում որոնման գործընթացում օգտագործողները երբ են դժվարանում կամ ամբողջությամբ անհաջողության մատնվում:

Հիմնվելով Պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքների և Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի սկզբունքների վրա, ինչպես նաև կարևորելով օգտագործողների մշտական կապի ամրապնդումը, ԱՐՄՍՍԱՏ-ը մշակել է հարցաթերթ՝ նրանց վերաբերմունքը, ակնկալիքներն ու պահանջմունքներն ուսումնասիրելու նպատակով:

Խիստ կարևորվում է նաև օգտագործողների բավարարվածության հետազոտությունների անցկացումը՝ առնվազն մեկ-երկու տարին մեկ անգամ:

Նրանց անկեղծ և անկաշկանդ պատասխանները նպաստում են ԱՐՄՍՍԱՏ-ի կողմից վիճակագրական տեղեկատվության տարածման, հաղորդակցության և պաշտոնական վիճակագրության մատուցման որակի հետագա բարելավմանը:

1.15. Վիճակագրական տվյալների գաղտնիությունը և պաշտպանվածությունը

ԱՐՄՍՍԱՏ-ը երաշխավորում է իրեն տրամադրված վիճակագրական տվյալների գաղտնիությունը և պաշտպանվածությունը:

Վիճակագրական գաղտնիք հանդիսացող տվյալները, առանց դրանց ներկայացնողի համաձայնության, հրապարակման կամ այլ ձևով տարածման ենթակա չեն: Համաձայնությունը պետք է արտահայտված լինի գրավոր: Իրավաբանական անձանց դեպքում համաձայնությունը տրվում է նրա գործադիր մարմնի կամ նրա կանոնադրությամբ համապատասխան լիազորություն ունեցող այլ մարմնի կողմից:

Համաձայնությունը կարող է պարունակել տվյալների օգտագործման վերաբերյալ սահմանափակումներ: Տեղեկությունների չհրապարակման կամ այլ ձևով չտարածման դրույթը չի գործում այն դեպքում, երբ դրանք բնական կամ այլ մենաշնորհային գործունեությունն արտացոլող

տեղեկություններ են, որոնց չհրապարակումն (չտարածումն) էապես կազդի վիճակագրական տեղեկատվության ամբողջականության սկզբունքների պահպանման վրա: Նման դեպքերում հրապարակման (տարածման) մասին որոշումը կայացնում է Խորհուրդը:

Վիճակագրական տեղեկություն տրամադրողի ուղղակի բացահայտում է տեղի ունենում, երբ հայտնի է դառնում նրա անունը (անվանումը), գտնվելու վայրը, դասակարգման նույնականացման ծածկագիրը: Անուղղակի բացահայտում է տեղի ունենում, երբ որևէ միավորի անհատականությունը հնարավոր է լինում պարզել վերը չնշված տվյալների միջոցով:

Վիճակագրական գաղտնիք պարունակող տվյալները բացառիկ դեպքում կարող են տրամադրվել կամ հրապարակվել անհատական (անվանական) տվյալների ուղղակի բացահայտման հնարավորություն չտվող ձևով և մասով՝ գիտահետազոտական աշխատանքներ իրականացման նպատակով՝ Խորհրդի որոշմամբ:

2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

ԱՐՄՍՍԱՏ-ն է այն միակ պատասխանատուն, թե ի՞նչ, ե՞րբ և ինչպե՞ս պետք է հրապարակվեն վիճակագրական տվյալները:

Եթե որևէ վիճակագրական հրապարակման օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվան, ապա ավարտի օր է համարվում հաջորդ աշխատանքային օրը, իսկ ամսվա վերջին օրվա (օրինակ՝ 35/36) ժամկետայնություն ունեցող հաճախականությամբ հրապարակումների համար՝ ժամկետի ավարտի ամսվա վերջին աշխատանքային օրը:

ԱՐՄՍՍԱՏ-ը նախապես պարտավորվում է 3 աշխատանքային օրվա ընթացքում հայտարարել որևէ ցուցանիշի հրապարակման ամսաթվի ուշացման, փոփոխման կամ չհրապարակելու մասին:

2.1. Տեղեկատվության հրապարակման նախապատրաստման ընթացակարգ

ԱՐՄՍՍԱՏ-ի նախնական և ամփոփ տեղեկատվությունը նախքան հրապարակումն անցնում է մշակման որոշակի փուլերով, ինչը հնարավորություն է ընձեռում կանխել և ընթացքում շտկել հավանական սխալները՝ օգտագործողին տրամադրելով վերջնական (արժանահավատ) արդյունք: Ստորև ներկայացնենք այդ ընթացակարգը:

Վիճակագրական տեղեկատվությունը հավաքվում, մշակվում, ամփոփվում և հրապարակման է պատրաստվում ԱՐՄՍՍԱՏ-ի վիճակագրություն արտադրող համապատասխան տորաբաժանումների կողմից:

Տվյալ ստորաբաժանման ղեկավարը պատրաստի նյութը ստուգելուց և որոշակի շտկումներ կատարելուց հետո վերջինիս թղթային տարբերակը ներկայացնում է տվյալ ոլորտը համակարգող Խորհրդի անդամին: Նրա կողմից տեղեկատվության համադրման, վերանայման և վերստուգման ավարտից հետո վերջինիս և՛ թղթային, և՛ էլեկտրոնային տարբերակները փոխանցվում են Վիճակագրական տեղեկատվության տարածման բաժին, որն էլ իրականացնում է վերջնական

ստուգման, ուղղման, ամփոփման, ստուգաճշտման, ձևաչափի պահպանման և հրապարակման նախապատրաստման համար անհրաժեշտ բոլոր աշխատանքները:

ԱՐՄՍՍՍՍ-ի նախագահի հավանությանն արժանանալուց հետո հրապարակման ենթակա նյութի էլեկտրոնային տարբերակը ենթարկվում է համացանցում տեղադրելու համար անհրաժեշտ գործողությունների ու մշակումների, որոնց ավարտից հետո միայն հանձնվում է Տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժին՝ նյութը համացանցում (www.armstat.am և www.armstatbank.am պաշտոնական կայքերում) տեղադրելու նպատակով:

Եթե որևէ հրապարակում պետք է հրատարակվի նաև թղթային տարբերակով, ապա Վիճակագրական տեղեկատվության տարածման բաժինը, զուգահեռաբար, հրապարակման պատրաստ նյութի և՛ թղթային, և՛ էլեկտրոնային տարբերակները փոխանցում է նաև Տպագրակազմարարական և պատճենահանման աշխատանքների բաժին կամ տպագրություն իրականացնող համապատասխան տպագրատուն:

2.2. Պաշտոնական վիճակագրության հասանելիությունը մինչ հրապարակումը

Վիճակագրական տվյալները մինչ դրանց հրապարակումը հասանելի չեն ոչ ոքի: Սա վիճակագրության տեղեկատվության տարածման ամենակարևոր սկզբունքներից է և մշակված է ապահովելու միաժամանակյա հասանելիություն բոլորի համար՝ առանց բացառությունների:

Ինչպես ԱՐՄՍՍՍՍ-ի նախագահը, այնպես էլ ԱՐՄՍՍՍՍ-ի վիճակագրություն արտադրող աշխատակիցներն առօրյա անհրաժեշտ հաշվարկների համար կարող են նախապես օգտվել դեռևս չհրապարակված (նախագծային կարգավիճակում գտնվող) վիճակագրական տվյալներից:

2.3.«Վիճակագրական ցուցանիշների թողարկման օրացույց»

ԱՐՄՍՍՍՍ-ի «Վիճակագրական ցուցանիշների թողարկման օրացույցը» (հետայսու՝ Ցուցանիշների օրացույց) նախապես ներառում է, թե երբ պետք է հրապարակվեն վիճակագրական տվյալները մեկ տարվա կտրվածքով՝ ըստ ամիսների և ընդգրկում է նախատեսված ցուցանիշների ցանկը՝ սկսած ընթացիկ տարվա հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը:

Ցուցանիշների օրացույցը եռալեզու տարբերակներով (հայերեն, անգլերեն, ռուսերեն) տեղադրվում է ԱՐՄՍՍՍՍ-ի պաշտոնական կայքում:

Ցուցանիշների օրացույցի հրապարակումը կայքում տվյալ տարվա համար նախատեսված առաջին հրապարակումներից է (սովորաբար՝ նախորդ տարվա ամենաուշը դեկտեմբեր ամսին):

Ցուցանիշների օրացույցը ներառում է յուրաքանչյուր ցուցանիշի անվանումը, հաճախականությունը (ամսական, եռամսյակային, կիսամյակային, տարեկան), հրապարակման ամսաթիվը (աշխատանքային օրը հաշվետու ժամանակշրջանից հետո), ընթացիկ կարգավիճակը (օպերատիվ, նախնական, ճշգրտված, վերջնական), նոր ցուցանիշ լինելու հանգամանքը, աղբյուրը (օրինակ՝ ԱՐՄՍՍՍՍ, Կենտրոնական բանկ, Ֆինանսների նախարարություն, այլ):

2.4.«Վիճակագրական հրապարակումների օրացույց»

ԱՐՄՍՍՍՍ-ի «Վիճակագրական հրապարակումների օրացույցը» (հետայսու՝ Հրապարակումների օրացույց) կազմվում է տվյալ տարվա Տարեկան ծրագրին համապատասխան: Հրապարակումների օրացույցը, համաձայն Տարեկան ծրագրի, օգտագործողին ներկայացնում է տվյալ տարում հրատարակվելիք վիճակագրական հրապարակումները (վիճակագրական ժողովածուներ, տեղեկագրեր, տեղեկատվական ամսական զեկույցներ, վիճակագրական զեկույցներ, մամուլի հաղորդագրություններ, այլ) մեկ տարվա կտրվածքով՝ ըստ տվյալ տարվա համապատասխան ծածկագրի: Այն ընդգրկում է տվյալ ամսում նախատեսված հրապարակումների ցանկը:

Հրապարակումների օրացույցը (հայերեն, անգլերեն, ռուսերեն) տեղադրվում է ԱՐՄՍՍՍՍ-ի պաշտոնական կայքում և նույնպես տարվա առաջին հրապարակումներից է (սովորաբար՝ նախորդ տարվա ամենաուշը դեկտեմբեր ամսին):

Հրապարակումների օրացույցը ներառում է յուրաքանչյուր հրապարակման անվանումը, տեսակը (վիճակագրական ժողովածուներ (ներառյալ տարեգիրքը), տեղեկագրեր, տեղեկատվական ամսական զեկույցներ, վիճակագրական զեկույցներ, մամուլի հաղորդագրություններ, այլ) հաճախականությունը (ամսական, եռամսյակային, կիսամյակային, տարեկան), հրապարակման տարբերակը (հայերեն, անգլերեն, ռուսերեն), թողարկման ժամկետը (ամիսը կամ աշխատանքային օրը հաշվետու ժամանակշրջանից հետո):

2.5. «Վիճակագրական հրապարակումների համացանկ»

Օգտագործողների համար վիճակագրական հրապարակումներից առավել արդյունավետ օգտվելու համար նպաստավոր պայմաններ ստեղծելու նկատառումով, ԱՐՄՍՍՍՍ-ը յուրաքանչյուր տարվա համար մշակում և հրապարակում է «Վիճակագրական հրապարակումների համացանկը»: Այն հանդես է գալիս որպես Տարեկան ծրագրի վերոնշյալ մասի լրացում և նպատակ ունի հանրությանը մանրամասնեցված տեղեկություն տրամադրել վիճակագրական հրապարակումների ցանկի, դրանց հաճախականության և համառոտ բովանդակության վերաբերյալ:

Հրապարակումը ներառում է տեղեկություն ԱՐՄՍՍՍՍ-ի կողմից տվյալ տարում թողարկվելիք բոլոր հրապարակումների մասին՝ արդեն իսկ նախատեսված կազմերի փոքրացված նկարներով և հակիրճ նկարագրությամբ: Հրապարակումների մասին տեղեկությունը ներառում է նաև նախատեսվող թողարկման ժամկետը (ըստ ամիսների), տարբերակը (հայերեն, ռուսերեն և/կամ անգլերեն) և ձևաչափը (PDF, թղթային):

Այս հրապարակումը (հայերեն, անգլերեն) նույնպես տվյալ տարվա առաջին հրապարակումներից է և լույս է տեսնում յուրաքանչյուր տարվա առաջին աշխատանքային օրը ու տեղադրվում ԱՐՄՍՍՍՍ-ի պաշտոնական կայքում:

2.6.Վիճակագրական հրապարակման կասեցումը

Կարող են լինել վիճակագրական հրապարակումների կասեցման դեպքեր: Այդ գործընթացը կանոնակարգվում և հաստատվում է Խորհրդի կողմից:

ԱՐՄՍՍՍՍ-ի գործունեության թափանցիկության ապահովման նպատակով, հրապարակման կասեցման մասին տեղեկատվությունն պետք է հասանելի լինի ԱՐՄՍՍՍՍ-ի պաշտոնական կայքում:

2.7.Նախնական և վերջնական տվյալների հրապարակումը

ԱՐՄՍՍՍՍ-ը որպես հանրային շահ հետապնդող մարմին, հրապարակում է վիճակագրական տարբեր ոլորտների նախնական-օպերատիվ և ճշգրտված (վերջնական) բազմաթիվ տվյալներ: Նախնական տվյալները հանրությանը հասանելի են ԱՐՄՍՍՍՍ-ի պաշտոնական կայքում (նաև տպագրված տարբերակով) վերջնականի հետ միասին, ինչը նույնպես հասանելի է ԱՐՄՍՍՍՍ-ի պաշտոնական կայքում:

Նախնական վիճակագրական տեղեկատվության տարածման և հաղորդակցության ամենամատչելի ձևերից մեկը մամուլի հաղորդագրություններն են: Դրանք ցուցանիշների ամփոփ համառոտագրերն են և թեմատիկ հաղորդագրությունները (ամսական և եռամսյակային հաճախականությամբ)՝ հիմնված ընթացիկ-օպերատիվ տվյալների վրա:

«Ն սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ընթացիկ-օպերատիվ ամփոփմամբ ստացված նախնական հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները մամուլի հաղորդագրության տեսքով հրապարակվում են ամսական կտրվածքով՝ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսի 25-ին (եթե այն ոչ աշխատանքային օր է, ապա հաջորդ աշխատանքային օրը)՝ ոչ ուշ, քան ժամը 12⁰⁰-ին, որպես կանոն, աղյուսակային ներկայացմամբ:

«ՆՆ սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշների համառոտագրերը» նույնպես մամուլի հաղորդագրություններ են, որոնք զանգվածային լրատվամիջոցների հրապարակման համար տրամադրվում են եռամսյակային կտրվածքով՝ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցի հրատարակումից հետո՝ երեք աշխատանքային օրերի ընթացքում:

2.8.Վիճակագրական տվյալների հրապարակման հետաձգումը

ԱՐՄՍՍՍՍ-ը տվյալ տարվա Տարեկան ծրագրով նախատեսված տվյալները (հրապարակումները) պարտադիր թողարկում է իր պաշտոնական կայքում զետեղված օրացույցներով հայտարարված ժամկետներին համապատասխան:

Այնուամենայնիվ, չնախատեսված հանգամանքների պատճառով կամ արդյունքում (ծայրահեղ անհրաժեշտությունից ելնելով) տվյալների (հրապարակումների) թողարկումը կարող է հետաձգվել մեկ կամ մի քանի օրով և/կամ նշանակվել թողարկման նոր օր:

Հետաձգման դեպքում ԱՐՄՍՍՍՍ-ն իր պաշտոնական կայքում պետք է հրապարակի հայտարարություն՝ մոտավորապես հետևյալ բովանդակությամբ՝ «...հրապարակման ամսաթիվը ենթարկվել է փոփոխության և հետաձգվել էօր/ամիս/տարի օրը՝ անկանխատեսելի հանգամանքների պատճառով: Հայցում ենք օգտագործողի ներողամտությունը: ԱՐՄՍՍՍՍ»:

2.9. Հրապարակված սխալների հայտնաբերման, ուղղման և ճշգրտման գործընթացը

ԱՐՄՍՍՍՍ-ի հրապարակած նախնական կամ հաշվարկային ցուցանիշները հաջորդ հրապարակումներում կարող են ենթարկվել ճշգրտման՝ պայմանավորված այն հանգամանքով, որ հաշվետու ժամանակահատվածը հնարավորություն չի ընձեռում սկզբնական տեղեկատվության ճշգրտությունն առավել խորությամբ ստուգելու:

Չնայած՝ ԱՐՄՍՍՍՍ-ը ջանք չի խնայում վիճակագրական հրապարակումներում սխալները նվազագույնի հասցնելու, և այնուամենայնիվ, երբեմն դրանք տեղի են ունենում: Մեծ է հավանականությունը, որ օգտագործողները կօգտվեն տվյալներից մինչ դրանց ուղղումը, այդ իսկ պատճառով էլ ուղղումները պետք է արվեն հնարավորինս արագ և պետք է հրապարակվեն ԱՐՄՍՍՍՍ-ի պաշտոնական կայքում այնպես, որ հստակորեն երևա, թե փաստացի ինչն է ուղղվել:

Վիճակագրական սխալները կարող են առաջանալ թվաբանական անճշտությունների կիրառման արդյունքում, համադրումների ոչ ճշգրիտ արտացոլման կամ էլ պարզապես անփութության հետևանքով:

Վիճակագրական հրապարակումների կազմման ժամանակ առաջացած սխալները կարող են հայտնաբերվել ընթացիկ ժամանակաշրջանում:

Եթե ուղղումը պահանջում է ավելի երկար ժամանակ, քան մեկ աշխատանքային օրը, սխալներով օրինակը պետք է հեռացվի ԱՐՄՍՍՍՍ-ի կայքից և պետք է տեղադրվի հայտարարություն, թե երբ է զետեղվելու ուղղված տարբերակը:

2.10. Հայտնաբերված և ուղղված սխալների մասին տեղեկացումը օգտագործողներին

Վիճակագրական տեղեկատվության մեջ հայտնաբերված սխալները լինում են աննշան և նշանակալի (կոպիտ).

- ✓ աննշան սխալներն այն սխալներն են, որոնք մեծամասամբ շփոթություն չեն առաջացնում օգտագործողի մոտ, քանզի այդպիսի սխալները կամ տրամաբանորեն նկատելի են (տպագրական, տեխնիկական, մեխանիկական), կամ էլ վիճակագրական բնույթի չեն (այսինքն, վիճակագրական սխալների սահմաններում չեն),
- ✓ նշանակալի (կոպիտ) սխալներն այն սխալներն են, որոնք օգտագործողի կողմից կարող են հանգեցնել վիճակագրական տեղեկատվության սխալ ընկալման և որոշակիորեն անդրադառնալ հրապարակված նյութի արժանահավատության և որակի վրա:

Հայտնաբերված աննշան սխալները սովորաբար ուղղվում են և՛ էլեկտրոնային, և՛ թղթային տարբերակներում (եթե հնարավոր է):

Եթե աննշան սխալը հայտնաբերված է սխալը թույլ տված ստորաբաժանման կողմից, ապա դրա մասին նրանք անմիջապես տեղեկացնում են Վիճակագրական տեղեկատվության տարածման բաժին, որն էլ հնարավորինս արագ ուղղում է համապատասխան սխալն առանց որևէ գրառման, քանզի այն չի ազդում վիճակագրական տեղեկատվության ճիշտ ընկալման վրա:

Էլեկտրոնային տարբերակում սխալի ուղղումը նշվում է աստղանիշով (*) և հղումով (օրինակ՝ «Ուղղված է ...27/...07/...2020թ. դրությամբ») թե՛ հրապարակման տվյալ էջի վրա, և թե՛ կայքի տվյալ հրապարակման նկարագրության մեջ (եթե այն առկա է):

Եթե աննշան սխալը հայտնաբերվում է Վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի կողմից, ապա համապատասխան ստորաբաժանման ղեկավարն անմիջապես տեղեկացվում է դրա մասին և նախաձեռնվում են դրա ուղղման համար համապատասխան միջոցառումներ:

Հայտնաբերված նշանակալի (կոպիտ) սխալներն ուղղվում են անհապաղ: Նույն սկզբունքով հրապարակման էլեկտրոնային տարբերակում սխալի ուղղումը նշվում է կարմիր աստղանիշով (*) և կարմիր հղումով (օրինակ՝ «Ուղղված է ...27/...07/...2020թ. դրությամբ»):

Վիճակագրական տեղեկատվության տարածման բաժինը բոլոր հասցեատերերին նյութի տպագրված (թղթային) պարագայում «ՈՒՂՂՈՒՄ» վերնագրով կից թղթիկում, աղյուսակային տեսքով, հայտարարում է սխալի ճշգրտման մասին: Աղյուսակի ծախս կողմում ներկայացվում է տեղ գտած սխալը, աջ կողմում՝ ճշգրտված տարբերակը, դրանով իսկ օգտագործողին լիարժեք տեղեկացնում տեղ գտած անճշտության մասին՝ բացատրելով հնարավոր թյուրըմբռնումները:

2.11. Վիճակագրական ցուցանիշների վերանայման քաղաքականությունը և վերանայման գործընթացն ԱՐՄՍՏՍ-ում

Վիճակագրական պրակտիկայում վերանայումն անհրաժեշտ և շարունակական գործընթաց է: Այն ենթադրում է մեթոդաբանական և/կամ տեխնիկական բնույթի փոփոխություն (փոփոխությունների խումբ), որի արդյունքում ճշգրտվում է(են) ցուցանիշը(ները)՝ ապահովելով դրանց անաչառությունը, օբյեկտիվությունը, մեթոդաբանական հիմնավորվածությունը, տվյալների օգտագործման արդյունավետությունը, արդիականությունը, ճշգրտությունը, հուսալիությունը, յուրաժամանակությունը, ճշտապահությունը, փոխկապակցությունը, համադրելիությունը, ինչպես նաև որակի ապահովման պարտավորությունը:

Վերանայման հիմնական խնդիրներից է միջազգային մակարդակով վիճակագրական պատմական շարքերում բերված ցուցանիշների համադրելիության ապահովումը:

Վիճակագրական ցուցանիշների վերանայման հիմնական նպատակն օգտագործողների իրազեկվածության բարձրացումն է և ԱՐՄՍՏՍ-ի վիճակագրական արտադրանքն առավել հասանելի դարձնելը, ինչպես նաև վիճակագրական տեղեկատվության միջազգային գործընթացներին ՀՀ վիճակագրության ինտեգրման շարունակական բարելավումը և վիճակագրական այլ համակարգերի հետ ներդաշնակեցումը:

Պատմական շարքերում ընդգրկված ցուցանիշների վերանայման ընթացքում իրականացվում են որոշակի լրացուցիչ աշխատանքներ, փորձագիտական գնահատումներ ու լրահաշվարկներ:

Ինչպես և միջազգային պրակտիկայում, ՀՀ-ում ևս վիճակագրական ցուցանիշները պարբերաբար ենթարկվում են վերանայման: Այս գործընթացը ներառում է ընթացիկ վերանայումներ և համալիր (խոշոր) վերանայումներ:

Ընթացիկ վերանայումներ.

Ընթացիկ վերանայումներն իրականացվում են ամսական, եռամսյակային և տարեկան պարբերականությամբ, որոնք իրականացվում են տվյալների ճշգրտումների և/կամ հասանելի դառնալու դեպքում՝ առանձին ամիսների, եռամսյակների և տարվա համար:

Սովորաբար, ընթացիկ տարվա ամսական և/կամ եռամսյակային տվյալները կարող են վերանայվել հաջորդ ամիսներում/եռամսյակներում, միևնույն ժամանակ ենթակա են վերանայման նաև նախորդ տարվա բոլոր ամիսները/եռամսյակները:

Համալիր (խոշոր) վերանայումների կառուցվածքը.

Համալիր վերանայումներն ընդգրկում են վիճակագրության որոշակի ոլորտ և/կամ ողջ համակարգը՝ երկար ժամանակահատվածի համար: Համալիր (խոշոր) վերանայումներն իրականացվում են կապված՝ ինչպես մեթոդաբանական փոփոխությունների և/կամ վերանայված դասակարգումների ներդրման հետ, այնպես էլ համատարած հաշվառումների (առնվազն 10 տարին մեկ անգամ իրականացվող) և միանվագ ընտրանքային հետազոտությունների (առնվազն 5-7 տարին մեկ անգամ իրականացվող) նոր գնահատականների հետ: Համալիր վերանայումներն իրականացվում են մակրովիճակագրության՝ ազգային հաշիվների վիճակագրության, վճարային հաշվեկշռի, արտաքին պարտքի դիրքի, միջազգային ներդրումային դիրքի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, պետական ֆինանսների վիճակագրության և այլ հիմնական վերանայումների զուգահեռաձայնեցմամբ (կոորդինացմամբ):

Վերանայման աշխատանքներն իրականացնելու համար օգտագործվում են նաև ՀՀ պետական կառավարման համակարգից (Կենտրոնական բանկ, Արտաքին գործերի նախարարություն, Ֆինանսների նախարարություն և այլն) ու միջազգային կազմակերպություններից ստացված տվյալները, ինչպես նաև նոր ընտրանքային հետազոտությունների ու հարցումների արդյունքները:

Ըստ նոր մեթոդաբանությունների, փոփոխություններն իրականացվում են ինչպես դասակարգչային, այնպես էլ մեթոդաբանական առումով: Միաժամանակ, ԱՐՄՍՍՍՏ-ը, հիմք ընդունելով միջազգային ու ներքին փորձագետների առաջարկություններն ու դիտողությունները, ինչպես նաև նպատակ ունենալով բարելավել որևէ ցուցանիշի ամբողջականության ու արժանահավատության մակարդակը, իրականացնում է նաև որոշ ցուցանիշների գծով պատմական շարքերի վերանայումներ:

ԱՐՄՍՍՍՏ-ը պարբերաբար վերանայում է վիճակագրական շարքերը՝ համաձայն վիճակագրական միջազգային կառույցների կողմից երաշխավորված և առաջարկվող մեթոդաբանական պահանջների և ներդրված դասակարգիչների:

3. ԱՐՄՍՏԱՏ-Ի ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

3.1. Վիճակագրական հրապարակումների տեսակները

Վիճակագրական հրատարակությունները վիճակագրական հրապարակումների հանդես գալու ձևերից են: ԱՐՄՍՏԱՏ-ի հրապարակումները հասանելի են հիմանկանում էլեկտրոնային տարբերակով:

ԱՐՄՍՏԱՏ-ի բոլոր վիճակագրական հրապարակումներն առկա են ԱՐՄՍՏԱՏ-ի պաշտոնական կայքում և բաց գրադարանում՝ անվճար հիմունքներով:

ԱՐՄՍՏԱՏ-ի թողարկումները հանդես են գալիս ստորև ներկայացվող հետևյալ հրապարակումների տեսքով.

- վիճակագրական հրապարակումների համացանկ,
- Ազգային ամփոփ տվյալների էջ,
- «Ատլաս»՝ ՀՀ-ն ըստ մարզերի և Երևան քաղաքի,
- Հայաստանի վիճակագրական տարեգիրք,
- վիճակագրական ժողովածուներ,
- վիճակագրական տեղեկագրեր,
- վիճակագրական զեկույցներ (նաև՝ վերլուծական),
- տեղեկատվական ամսական զեկույցներ,
- մամուլի հաղորդագրություններ,
- տվյալների բազաներ (ներառյալ՝ միկրոտվյալների գրադարանը (տես՝ <http://microdata.armstat.am/index.php/home> հղումը),
- Հայաստանի տվյալները Կայուն զարգացման նպատակների ցուցանիշների համար (տես՝ <http://sdg.armstat.am/am/> հղումը),
- սոցիալական մեդիա՝ <https://www.facebook.com/armstat.am>
- վիճակագրական ցուցանիշների թողարկման օրացույց,
- վիճակագրական հրապարակումների օրացույց,
- միջազգային մեթոդաբանական ուղեցույցներ և ձեռնարկներ,
- որակի հռչակագրեր (փաստաթղթավորում),
- այլ:

Բոլոր հրապարակումները թողարկվում են համաձայն Տարեկան ծրագրի, որոշակի հաճախականությամբ (ամսական, եռամսյակային, կիսամյակային, տարեկան): ԱՐՄՍՏԱՏ-ը կարող է նաև ունենալ այլ հրապարակումներ, որոնք նշված չեն այս ցուցակում:

ԱՐՄՍՏԱՏ-ի պաշտոնական կայքի Գլխավոր էջում զետեղված են «Տվյալների տարածման օրացույցներ», «Վիճակագրական տվյալներ» տեղեկատվական բազան, տվյալ տարվա «Վիճակագրական հրապարակումների համացանկը», «Հայաստանի վիճակագրական տարեգիրքը», ինչպես նաև տվյալ ամսվա ընթացքում հրապարակված 3-4 նոր հրապարակումներ: Գլխավոր էջում առկա են նաև «Նախագծեր», «Նորություններ» և այլ հատվածներ, որոնք միտված են դյուրինացնել օգտագործողի ցանկացած փնտրտուքը:

3.2.Վիճակագրական հրապարակումների թողարկման հաստատումը

ԱՐՄՍՏԱՏ-ի կողմից իրականացված յուրաքանչյուր հրապարակում պետք է ուսումնասիրվի, հավանության արժանանա և հաստատվի ԱՐՄՍՏԱՏ-ի նախագահի և վիճակագրության տվյալ ոլորտը կարգավորող և համակարգող պատասխանատուի (Խորհրդի անդամի) կողմից:

3.3.Վիճակագրական հրապարակումների ձևաչափը

ԱՐՄՍՏԱՏ-ը, բացի մասնագիտականից, պատասխանատվություն է կրում նաև վիճակագրական յուրաքանչյուր հրապարակման ձևաչափի (դիզայնի) համար:

Եթե ԱՐՄՍՏԱՏ-ը նախատեսում է նյութը հրապարակել նաև թղթային (տպագիր) տարբերակով, ապա հրապարակման մեկ օրինակը պարտադիր տրամադրում է ԱՐՄՍՏԱՏ-ի բաց գրադարանին, Հայաստանի ազգային արխիվին, ՀՀ ազգային գրադարանին և ՀՀ ազգային գրապալատին:

3.4.Վիճակագրական հրապարակումների թողարկման ժամկետների և ճշտապահության պատասխանատվությունը

ԱՐՄՍՏԱՏ-ի վիճակագրություն արտադրող այն ստորաբաժանումները, որոնք մասնակցում են որևէ վիճակագրական ժողովածուի նախապատրաստման աշխատանքներին՝ դրանցում առկա աղյուսակների, գրաֆիկների (գծապատկերների), քարտեզային պատկերավորումների, ցուցանիշների տրամադրման ժամկետների և ճշտապահության պահպանման առումով պատասխանատու են վիճակագրության տվյալ ոլորտը կարգավորող և համակարգող Խորհրդի անդամին:

Ստորաբաժանման ղեկավարը պարտավոր է պահպանել Տարեկան ծրագրով նախատեսված վիճակագրական հրապարակումների կազմման աշխատանքների ժամկետները:

3.5.Տվյալներ այլ հաստատություններից

ԱՐՄՍՏԱՏ-ը, որպես պաշտոնական վիճակագրություն տարածող, վիճակագրական տեղեկատվություն է ստանում նաև այլ հաստատություններից, ինչը ներառում է իր հրապարակումներում:

ԱՐՄՍՏԱՏ-ը նշում է տեղեկատվության աղբյուրը և պատասխանատվություն չի կրում այլ աղբյուրներից ստացված տեղեկատվության ճշգրտության համար:

3.6. Միջազգային համադրումներ

Տարբեր երկրների վիճակագրական տեղեկատվության որակի, թափանցիկության, տվյալների համադրելիության ապահովման, միջազգային հանրությանը դրանց օգտագործման ավելի լայն հնարավորությունների ընձեռման, կիրառվող մեթոդաբանության և դրա հետագա զարգացման ծրագրերին տեղեկացնելու նպատակով ԱՄՀ վիճակագրական վարչությունը 1997թ. դեկտեմբերին ստեղծել է «Տվյալների տարածման ընդհանուր համակարգ (SSՀ)», որին Հայաստանի Հանրապետությունն անդամագրվել է 2001թ. մարտի 29-ին, իսկ 1996թ. մարտին՝ «Տվյալների տարածման հատուկ ստանդարտ (SSՀ)»-ին, որին Հայաստանի Հանրապետությունն անդամագրվել է 2003թ. նոյեմբերի 7-ին, դրանով իսկ դառնալով վիճակագրության բնագավառում կիրառվող միջազգային ամենախիստ ստանդարտին անդամագրվող 54-րդ երկիրը:

SSՀ-ն ԱՄՀ վիճակագրական տվյալների հավաքման, մշակման, որակի, պարբերականության, ինչպես նաև տեղեկատվության տարածման միասնական համակարգի բաղկացուցիչ մասն է: Այն պարունակում է մշտական պահպանման խիստ պահանջներ, ինչի վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակայնորեն առկա է ԱՄՀՍ ստանդարտների տարածման տեղեկագրում՝ <http://dsbb.imf.org/Pages/SDDS/Home.aspx>: Ստանդարտների տարածման տեղեկագիրը ներկայումս ներառում է համապարփակ փաստաթղթեր (մեթատվյալներ, ինչպես նաև դրանց համառոտ մեթոդաբանություն) SSՀ տվյալների կատեգորիաների մասով Հայաստանի Հանրապետության վիճակագրական փորձառության վերաբերյալ, որը վկայակոչում է ԱՐՄՍՍՍ-ի կողմից վարվող Ազգային ամփոփ տվյալների էջում ներառված երկրի արդիական տվյալները՝ <http://docs.armstat.am/nsdp/>: Մեթատվյալները զետեղված են նաև ԱՐՄՍՍՍ-ի պաշտոնական կայքի «Դասակարգիչներ և մեթոդաբանություն» բաժնի «Մեթատվյալներ» ենթաբաժնում:

SSՀ-ն ներառում է 22 խումբ ցուցանիշներ, որոնք ընդգրկված են իրական, դրամավարկային, ֆինանսական, արտաքին և սոցիալ-ժողովրդագրական հատվածներում: Այդ ցուցանիշների արդիականացումն իրականացվում է ամսական և եռամսյակային, իսկ մեթատվյալների և դրանց համառոտ մեթոդաբանության արդիականացումը՝ առնվազն տարեկան կտրվածքով: Տվյալների արդիականացման ժամկետները ներկայացված են ԱՐՄՍՍՍ-ի կողմից վարվող նախապես տարածման օրացույցի էջում՝ <http://docs.armstat.am/nsdp/arc/>:

Վիճակագրական որոշ հրապարակումներ պարունակում են միջազգային համադրումներ, որպեսզի հնարավորություն ընձեռվի ՀՀ-ին առնչվող առկա վիճակագրական նույնանման տեղեկատվությունը համեմատել ԱՊՀ և աշխարհի այլ երկրների վիճակագրական տեղեկատվության հետ:

Միջազգային համադրումներում տեղ գտած վիճակագրական տեղեկատվությունը վերցվում է վիճակագրական համանման միջազգային աղբյուրներից (հրապարակումներից):

Ցանկացած միջազգային տեղեկատվություն պետք է ունենա հղում՝ նշելով աղբյուրը: ԱՐՄՍՍՍ-ը պատասխանատու չէ այդ տեղեկատվության ճշտության համար:

3.7.«Հայաստանի վիճակագրական տարեգիրք»

«Հայաստանի վիճակագրական տարեգիրքը» (հետայսու՝ Տարեգիրք) ԱՐՄՍՏԱՏ-ի ամբողջական, եռալեզու հրապարակումն է (հայերեն, անգլերեն և ռուսերեն)՝ ուղղված վիճակագրական տեղեկատվության օգտագործողների ամենալայն շրջաններին: Այն տպագրվում, հրապարակվում է տարեկան պարբերականությամբ՝ յուրաքանչյուր տարվա նոյեմբերին:

Տարեգրքում ներկայացվում են վիճակագրական աղյուսակներ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ՝ վերջին 5 տարիների շարժընթացով: Որոշ ցուցանիշներ ներկայացվում են նաև ՀՀ մարզերի և Երևան քաղաքի կտրվածքով:

Ժողովածուի յուրաքանչյուր բաժնի վերջում ներառվում են որոշ ցուցանիշների գծապատկերներ: Այն շարունակաբար համալրվում է նոր աղյուսակային նյութերով և գծապատկերներով:

Հրապարակման մեջ առկա բոլոր տվյալները համապատասխանում են վիճակագրության արդի մեթոդաբանությանը, ինչն ապահովում է դրանց միջազգային համադրելիությունը:

Նախորդ ժողովածուի մեջ հրապարակված որոշ ցուցանիշներ տվյալ հրապարակման մեջ ճշգրտվում են, իսկ որոշ ցուցանիշներ էլ նախնական են:

Տարեգիրքը պարունակում է նաև միջազգային համադրումներ՝ Հայաստանի Հանրապետության, ԱՊՀ և այլ երկրների միջև համեմատություններ իրականացնելու նպատակով: Տարեգիրքը զետեղվում է ԱՐՄՍՏԱՏ-ի պաշտոնական կայքում:

3.8.Տեղեկատվական ամսական զեկույց

ԱՐՄՍՏԱՏ-ի «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցները կառուցվում են Խորհրդի կողմից հաստատվող Տարեկան ծրագրերով նախատեսված ճյուղային (գերատեսչական) և տեղական (համայնքային) վիճակագրություն իրականացնող մարմինների, վիճակագրական այլ տեղեկություններ տրամադրողների կողմից ներկայացվող վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթերի, տեղեկագրերի և այլն), հաշվարկների և ԱՐՄՍՏԱՏ-ի կողմից դրանց ամփոփման, ինչպես նաև Արմատատի կողմից մշակվող ցուցանիշների, իրականացվող հետազոտությունների, տեղեկատվահրատարակչական գործունեության արդյունքում ամփոփված նյութերի հիման վրա (ժողովածուներ, տեղեկագրեր, մամուլի հաղորդագրություններ, վիճակագրական զեկույցներ):

1999թ. ապրիլից սկսած, զեկույցների բովանդակությունը ներկայացվում է Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կողմից մշակված՝ «Տվյալների տարածման ընդհանուր համակարգի» հատվածներին համապատասխան, որոնք համընկնում են ԱՄՀ «Տվյալների տարածման հատուկ ստանդարտ»-ի հատվածներին վերաբերող պահանջների հետ:

Զեկույցները, համաձայն Տարեկան ծրագրով նախատեսված ժամանակացույցի, երկլեզու են (հայերեն և ռուսերեն տարբերակներ) և հրապարակվում են ամսական կտրվածքով՝ հայերեն տարբերակը հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 35/36-րդ օրը, իսկ ռուսերեն տարբերակը՝ 40/41-րդ օրը:

Տեղեկատվական ամսական զեկույցներն ամսական պարբերականությամբ ներկայացվում են հակիրճ, իսկ եռամսյակային պարբերականությամբ՝ առավել մանրամասն, ընդլայնված ու ընդհանրական:

Եռամսյակային զեկույցներում ընդգրկվում է «Մեթոդաբանական պարզաբանումներ» հավելվածը, որում հակիրճ ներկայացվում են հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների բնութագրերը, հաշվարկման մեթոդաբանությունը:

Զեկույցներում արտացոլված, ինչպես նաև վիճակագրական այլ տեղեկությունները զետեղվում են Արմստատի <http://www.armstat.am> և <http://www.armstatbank.am> պաշտոնական կայքերում:

ԱՄՀ «Տվյալների տարածման հատուկ ստանդարտ»-ին (որին 2003թ. նոյեմբերի 7-ից անդամակցում է նաև Հայաստանի Հանրապետությունը) համապատասխան՝ ԱՄՀ ստանդարտների տարածման տեղեկագրում՝ <http://dsbb.imf.org/Applications/web/dsbbhome/> առկա է անգլերենով Հայաստանի վիճակագրության համապարփակ մեթոդաբանությունը, իսկ նույն ստանդարտի Արմստատի կողմից վարվող Ազգային ամփոփ տվյալների էջում <http://docs.armstat.am/nsdp/> առկա են երկրի համապատասխան տվյալները:

«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցների օրինակները պահպանվում են ԱՐՄՍՍԱՏ-ի բաց գրադարանում:

3.9.Վիճակագրական տեղեկագիր

Վիճակագրական տեղեկագիրը երկրի տնտեսության որևէ առանձին հատվածի (ենթահատվածի, ոլորտի) վիճակագրական դինամիկ ցուցանիշների ներկայացումն է աղյուսակային տեսքով (առանց տեքստային մասի):

Վիճակագրական տեղեկագրերը, համաձայն Տարեկան ծրագրով նախատեսված ժամանակացույցի, հրապարակվում են ամսական, եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան պարբերականությամբ:

3.10.Վիճակագրական զեկույց (ներառյալ՝ վերլուծական)

Երկրում աղքատության մակարդակի և սոցիալական իրավիճակի վերաբերյալ հանրությանը տեղեկացնելու նպատակով, ԱՐՄՍՍԱՏ-ը, տարեկան հաճախականությամբ հրապարակում է «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական-վերլուծական զեկույցը՝ Համաշխարհային բանկի վերլուծական և տեխնիկական աջակցությամբ:

Զեկույցը կոչված է հանրությանը տրամադրելու տվյալ տարվա կենսապայմանների և երկրի սոցիալական իրավիճակի մասին տեղեկատվություն: Այն մանրամասն վիճակագրական տեղեկատվություն է տրամադրում ընթացիկ սոցիալական և տնտեսական զարգացումների մասին, նկարագրում է աղքատության շարժընթացը երկրի և տարբեր սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական և աշխարհագրական մակարդակներով:

Ձեկույցի հիմքը ԱՐՄՍՍՍՍ-ի կողմից յուրաքանչյուր տարի իրականացվող տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության (ՏՏԿԱՀ) արդյունքներն են: Այդպիսի վիճակագրական ուսումնասիրությունները միջազգայնորեն համարվում են բնակչության կենսամակարդակը բնութագրող տվյալների հավաքման առավել կարևոր գործիք: Հետազոտությունների միջոցով տնային տնտեսությունների և առանձին անհատների բարեկեցության վերաբերյալ հավաքվում է արժեքավոր տեղեկատվություն, ինչը հնարավորություն է ընձեռում ԱՐՄՍՍՍՍ-ին տարեկան կտրվածքով հանրությանը տրամադրել արդիական տեղեկատվություն՝ բնակչության եկամուտների, ծախսերի, աղքատության մակարդակի և այլ ցուցանիշների փոփոխությունների վերաբերյալ:

«Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» հրապարակման հիմքում ընկած են հաշվետու տարում իրականացված տնային տնտեսությունների հետազոտությունից հավաքված տվյալները: Հետազոտության ընտրանքի ձևավորման համար օգտագործվում է նաև ՀՀ մարդահամարների տվյալների բազան: Ձևավորված ընտրանքի չափը հնարավորություն է ընձեռում ապահովելու տվյալների նվազագույն ներկայացուցչականություն մարզային կտրվածքով: Նպատակ ունենալով փաստագրել ՀՀ-ում սոցիալ-տնտեսական իրավիճակն ու աղքատության մակարդակը՝ զեկույցը ներկայացնում է երկրի սոցիալ-տնտեսական զարգացումների և աղքատության մակարդակի փոփոխությունների համապարփակ վերլուծությունը:

3.11. Մամուլի հաղորդագրություն

Տեղեկատվության տարածման և հաղորդակցության ամենամատչելի ձևերից մեկը մամուլի հաղորդագրություն է: ԱՐՄՍՍՍՍ-ի մամուլի հաղորդագրությունների հանդես գալու ձևերից են. «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ընթացիկ-օպերատիվ ամփոփմամբ ստացված նախնական հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները», «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշների համառոտագրերը» (ամսական և եռամսյակային պարբերականությամբ) և թեմատիկ հաղորդագրությունները:

«ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ընթացիկ-օպերատիվ ամփոփմամբ ստացված նախնական հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները» մամուլի հաղորդագրությունները հրապարակվում են ամսական կտրվածքով՝ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 25-ին ժամը 12⁰⁰-ին, որպես կանոն, աղյուսակային ներկայացմամբ: Եթե տվյալ ամսվա 25-ը համընկնում է ոչ աշխատանքային օրվան, ապա հրապարակման օր է համարվում հաջորդ աշխատանքային օրը:

«ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշների համառոտագիրը» զանգվածային լրատվամիջոցներին հրապարակման համար տրամադրվում են եռամսյակային կտրվածքով՝ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցի հրատարակումից (տպագրումից) հետո՝ երեք օրվա ընթացքում: Դրանք իրենց մեջ ներառում են նաև աղյուսակային, գրաֆիկական նյութեր:

Թեմատիկ հաղորդագրությունների շարքում պատրաստվում են նաև միջազգային համադրումներ լուսաբանող աղյուսակային նյութեր:

Ծրագրվածից դուրս, թեմատիկ մամուլի հաղորդագրություններ պատրաստվում են նաև ԱՐՄՍՍՍՏ-ի կողմից կազմակերպվող մամուլի ասուլիսների, ԱՐՄՍՍՍՏ-ի վիճակագրական հրատարակությունների շնորհանդեսների, սեմինարների մասնակիցների և այլ դեպքերի համար:

3.12.Նախնական արդյունքների հրապարակումներ

Համատարած հաշվառումների (օրինակ՝ մարդահամարների) արդյունքում հավաքված տեղեկատվության վերջնական ամփոփումից և հրապարակումից առաջ հրապարակվում են նախնական արդյունքներ (հրապարակումներ), որոնք տվյալների տեղեկատվական բազայի կառուցվածքային ու տրամաբանական ստուգաճշտման աշխատանքներով պայմանավորված կարող են ենթարկվել փոփոխության: Այլ խոսքով՝ սա մի հրապարակում է, որտեղ տվյալները տպագրվում են (հրապարակվում) առաջին անգամ:

Բոլոր առաջին հրապարակումներն անվճար հիմունքներով հասանելի են ԱՐՄՍՍՍՏ-ի պաշտոնական կայքում:

3.13.Վիճակագրական հաշվետվություններ

Վիճակագրական հաշվետվություններն ամբողջական (բազմակողմանի) անհատական կամ բազմաթիվ հետազոտությունների (ուսումնասիրությունների) արդյունքներ են: Սովորաբար դրանք հրապարակվում են տարեկան հաճախականությամբ:

Վիճակագրության որոշ ոլորտների համար հաշվետվությունները կարող են լինել նաև ավելի նվազ հաճախականությամբ:

3.14.Մեթոդաբանական ուղեցույցներ, ձեռնարկներ

Մեթոդաբանական ուղեցույցը ներառում է վիճակագրական տեղեկատվության հավաքման աղբյուրները և մեթոդները: Այն հրապարակվում է հայերեն և/կամ անգլերեն, ռուսերեն՝ և՛ էլեկտրոնային, և՛ թղթային տարբերակներով:

ԱՐՄՍՍՍՏ-ի պաշտոնական կայքում մշտապես զետեղվում են վիճակագրական հրապարակումներ (հայերեն, ռուսերեն, անգլերեն), որոնցում հիմնականում ընդգրկված են վիճակագրական ցուցանիշների սահմանումներ և մեթոդաբանական պարզաբանումներ:

Միջազգային վիճակագրական մեթոդաբանության զարգացման առաջընթացը հասանելի դարձնելու և դրան իրազեկ լինելու նպատակով ԱՐՄՍՍՍՏ-ի բաց գրադարանը ստանում և պահպանում է միջազգային տարբեր կազմակերպությունների, ինչպես նաև այլ երկրների վիճակագրական ծառայությունների հրապարակումները:

3.15.Վիճակագրական հետազոտություններ

Հետազոտությունները ներառում են անհատական և/կամ խմբային հեղինակների աշխատանքներ, ինչը վիճակագրական տարբեր ուսումնասիրությունների արդյունք է: Հեղինակները կարող են լինել և՛ ԱՐՄՍՍՍՍ-ի աշխատակիցները, և՛ համագործակցողները:

Հետազոտությունները հիմնականում հասանելի են էլեկտրոնային տարբերակներով, սակայն հնարավոր են նաև տպագիր (թղթային) տարբերակներ:

Համաձայն Տարեկան ծրագրի, ԱՐՄՍՍՍՍ-ը վիճակագրական հետազոտություններ (դիտարկումներ, հարցումներ) է իրականացնում, որոնց նյութերի ամփոփման արդյունքում հրատարակվում են վիճակագրական ժողովածուներ, զեկույցներ, գրքույկներ և այլն:

Համատեղ հետազոտություններ, դիտարկումներ, ծրագրեր իրականացրած լինելու դեպքում ԱՐՄՍՍՍՍ-ը համատեղ հրատարակություններում կարող է հանդես գալ որպես համահեղինակ:

3.16.Հատուկ թողարկումներ

Հատուկ թողարկումները հատկապես կարևոր են վիճակագրության հետագա զարգացման համար և հիմնականում միտված են փորձագետներին: Դրանք թողարկվում են պարբերաբար և ընդգրկում են մեթոդաբանության բարելավման համար կարևոր սուբյեկտներ:

3.17.Զծրագրված թողարկումներ

Ժամանակ առ ժամանակ ԱՐՄՍՍՍՍ-ը կարող է նաև թողարկել հրատարակումներ, որոնք ծրագրավորված չեն, նախատեսված չեն Տարեկան ծրագրում, բնականաբար նաև Ցուցանիշների թողարկման օրացույցում և Հրատարակումների օրացույցում: Այսպիսի դեպքերում չծրագրված հրատարակումները ԱՐՄՍՍՍՍ-ի պաշտոնական կայքում պետք է առնվազն 3 աշխատանքային օր առաջ հայտարարվեն, որպեսզի համոզված լինեն, որ բոլոր օգտագործողները տեղեկացված են չծրագրված թողարկման մասին:

Առանձին թեմատիկ հրատարակություններ: Որոշակի դեպքերում կիրառվում են նաև հրատարակումների այլ ձևեր: Մասնավորապես, «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքով իրեն տրված իրավասության սահմաններում և համապատասխան ռեսուրսային ապահովման պարագայում, ԱՐՄՍՍՍՍ-ն իրականացնում է նաև Տարեկան ծրագրում չընդգրկված տեղեկատվության հրատարակում կամ իրականացում դրանում ընդգրկվածների ագրեգացման և սինթեզման այլաստիճանների վրա գտնվող տեղեկատվության հրատարակում (այդ թվում՝ նաև նշված հրատարակումների ձև չընդունող օգտագործողների առանձին գրություն-հարցումներին պատասխան-գրություններով պատասխանելու միջոցով):

3.ԱՐՄՍՍԱՏ-Ի ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ

ԱՐՄՍՍԱՏ-ը վիճակագրական տեղեկատվությունը տարածում է պաշտոնական կայքի, գրադարանի, հնարավորության դեպքում նաև թղթային (տպագիր) հրապարակումների տարածման, խոշոր տեղեկատվական գործակալությունների միջոցով և այլ եղանակներով:

ԱՐՄՍՍԱՏ-ի վիճակագրական հրապարակումների թղթային (տպագիր) օրինակների տարածումն իրականացվում է անվճար:

Եվրամիության (ԵՄ) Թվինինգ ծրագիրը նպաստել է Հայաստանի վիճակագրության մոտարկմանը միջազգային չափանիշներին՝ մի շարք կարևոր վիճակագրական ոլորտների համար: Ծրագրի արդյուքում 2012թ. սեպտեմբերի 14-ին ներդրվել է ԱՐՄՍՍԱՏ-ի www.armstatbank.am տվյալների բազան (մոտ 200 վիճակագրական աղյուսակներ (բազաներ)), որը հասանելի է ողջ հանրությանը: Այն մատչելի միջոց է մուտք գործելու ԱՐՄՍՍԱՏ-ի տվյալներին՝ հիմնված օգտվողի համար շատ հարմարավետ PX-Web ծրագրի վրա (Շվեդիայի վիճակագրության կողմից մշակված), որը հնարավորություն է ընձեռել վիճակագրության օգտագործողներին ներբեռնել վիճակագրական տվյալները իրենց իսկ նախընտրելի ձևաչափերով:

www.armstatbank.am-ը հնարավորություն է ընձեռել օգտագործողին հետաքրքրող աղյուսակները և ցուցանիշները շատ պարզ ընթացակարգով՝ տրամադրել արագ և մատչելի հասանելիություն վիճակագրական տեղեկատվությանը և ներբեռնել տվյալներ MS Excel, xml կամ այլ ձևաչափերով, ինչպես նաև դյուրին նախագծել և ստեղծել գծապատկերներ և աղյուսակներ՝ կառուցված օգտագործողների պահանջներին համապատասխան: Հայաստանն առաջին երկիրն էր աշխարհում, որը օգտագործեց PX-Web 2012թ. տարբերակը:

Օգտագործողի համար հասանելի են նաև վիճակագրական արտադրանքների համար նախատեսված Որակի հոշակագրերը: Որակի հոշակագիրը նկարագրում է վիճակագրության օրենսդրական հիմքերը, վիճակագրության նպատակը և մեթոդաբանությունը, դրա տարածումը և օգտագործողների ու նրանց մոտ առաջացող հարցերի փարատման համար այլ կարևոր տեղեկատվություն:

Որակի հոշակագրերը մշակվել են ԱՐՄՍՍԱՏ-ի յուրաքանչյուր վիճակագրական արտադրանքի համար (վիճակագրական 17 բնագավառների ներքո առկա է 138 արտադրանք (հայերեն, անգլերեն)): Որակի հոշակագրերն ըստ առանձին արտադրանքների հրապարակվում են սույն կայքում: Աշխատանքն իրականացվել է որպես Եվրամիության Թվինինգ ծրագրի վիճակագրությունում «Որակի կառավարում» բաղադրիչի մի մաս: Թեման մանրամասն նկարագրված է «Տվյալների որակի գնահատում և գործիքներ» ձեռնարկում (տես՝ http://epp.eurostat.ec.europa.eu/portal/page/portal/quality/quality_reporting հղումը):

ԱՐՄՍՍԱՏ-ում վիճակագրական տեղեկատվության ներքին տարածումը հիմնականում իրականացվում է համացանցի միջոցով:

4.ՏՎՅԱԼՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԵՋ

Ազգային վիճակագրությունը ժողովրդավարության խորհրդանիշ է: Չնայած որ ազգային վիճակագրությունը միտված է բավարարել օգտագործողների պահանջմունքները, լինում են դեպքեր, երբ օգտագործողը չի կարողանում գտնել իրեն անհրաժեշտ վիճակագրական տեղեկատվությունը և տվյալները, ինչը, բնականաբար, չի նշանակում, որ տվյալ տեղեկատվությունը գոյություն չունի:

ԱՐՄՍՍԱՏ-ի վիճակագրական տեղեկատվության տարածման և հաղորդակցության քաղաքականության գլխավոր ուղղություններից է օգտագործողների հետագա պահանջների կանխատեսումը: Այդ իսկ պատճառով, առկա է որոշակի վիճակագրական տեղեկատվություն, որը հասանելի է միայն հատուկ պահանջի դեպքում:

4.1.Տեղեկատվության/տվյալների հարցումը (պահանջը)

ԱՐՄՍՍԱՏ-ի վիճակագրական տեղեկատվությունը հասանելի է հայերեն, անգլերեն և ռուսերեն: Տեղեկատվության հարցումը (պահանջը, պատվերը) կարող է ընդունվել.

- ✓ փոստով,
- ✓ էլեկտրոնային փոստով,
- ✓ հեռախոսով,
- ✓ բաց գրադարանից,
- ✓ ֆաքսով,
- ✓ սոցիալական ցանցով,
- ✓ այլ:

Տեղեկատվության պահանջին պետք է պատասխանել հեռախոսով, էլեկտրոնային փոստով կամ փոստով (գրությամբ): Օգտագործողը հեռախոսով կարող է ճշտել, թե ցանկալի տեղեկատվությունն ինչպես կարելի է ստանալ:

5.ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄԸ

5.1.Վիճակագրական տեղեկատվության տարածման բաժին

ԱՐՄՍՍԱՏ-ի սույն ստորաբաժանումը համակարգում է Տարեկան ծրագրի նախագծի կազմումը և դրա վերաբերյալ վիճակագրական տեղեկատվություն տրամադրողների (ռեսպոնդենտների) և օգտագործողների կարծիքի ու պահանջմունքների ուսումնասիրումը, վարում է վերոհիշյալի իրականացման մշտադիտարկումը և կազմում դրա կատարման հաշվետվությունը:

Ապահովում է Տարեկան ծրագրում ներառված ԱՐՄՍՍԱՏ-ի կառուցվածքային ստորաբաժանումների վիճակագրական աշխատանքների իրականացման եռամսյակային

մշտադիտարկումը և կազմում դրանց կատարման հաշվետվությունը:

Մասնակցում է ԱՐՄՍՍՍՍ-ի միջնաժամկետ ծախսերի ծրագրի ոլորտի քաղաքականության վերաբերյալ փաստաթղթի կազմման աշխատանքներին:

Եռամսյակային հաճախականությամբ վարում է ԱՐՄՍՍՍՍ-ի ՀՀ պետական բյուջեով սահմանված ծրագրերի իրականացումը բնութագրող արդյունքային ցուցանիշների կանխատեսումների մշակումը, ինչպես նաև այդ ծրագրերի իրականացումը բնութագրող արդյունքային ցուցանիշների կատարման մասին ըստ եռամսյակների (աճողական) տեղեկատվությունը:

Ստորաբաժանումը կանոնավորում է ԱՐՄՍՍՍՍ-ի վիճակագրություն արտադրող ստորաբաժանումների կողմից Տարեկան ծրագրով նախատեսված վիճակագրական հրապարակումների սրբագրման, խմբագրման, թղթային տեսքով հրապարակման և դրանց էլեկտրոնային տարբերակների մշակման ու ԱՐՄՍՍՍՍ-ի պաշտոնական կայքում տեղադրման աշխատանքները, ապահովում է դրանց ձևատեսքը և թողարկումը:

Ապահովում է ԱՐՄՍՍՍՍ-ի պաշտոնական կայքերում նոր բազաների տեղադրումը, տեղադրված բազաների շարունակական թարմացումը, օգտագործողների ցանկերի փոփոխությունների մշտադիտարկումը և թարմացումը, հրապարակված վիճակագրական նյութերի տարածումն ըստ օգտագործողների ցանկերի:

Համագործակցության շրջանակում ապահովում է վիճակագրական տեղեկատվության փոխանակումը միջազգային կազմակերպությունների, վիճակագրական ծառայությունների, ինչպես նաև ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտեի և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ (այդ թվում նաև՝ ամենամսյա, եռամսյակային, տարեկան հաշվետվությունների ձևերի էլեկտրոնային փոստով փոխանակումը):

Կազմակերպում է վիճակագրական հրապարակումների տարածումն օգտագործողների շրջանում, իրականացնում է վիճակագրական հրապարակումների էլեկտրոնային արխիվացման աշխատանքները, ինչպես նաև օգտագործողների պահանջարկի ուսումնասիրման հետազոտություն-հարցումները:

Ստորաբաժանումն ապահովում է մամուլի ասուլիսների, հարցազրույցների, ճեպազրույցների կազմակերպումը, ինչպես նաև իր իրավասությունների շրջանակում հանդես է գալիս պարզաբանումներով ու հայտարարություններով:

Եթե ԱՐՄՍՍՍՍ-ի աշխատակիցները լրատվամիջոցներում բացահայտում են թյուրիմացություն, թերըմբռնում, սխալ տեղեկատվություն կամ նման այլ բան, ապա դրա մասին տեղեկացնում է սույն ստորաբաժանմանը, որն էլ հնարավորինս կարճ ժամանակահատվածում կապ է հաստատում հոդվածը հրապարակող լրագրողի հետ և խնդրում, որ նա շտկումներ մտցնի իր հրապարակման մեջ:

Վիճակագրական տեղեկատվության տարածման բաժինը պատասխանատու է օգտագործողների պահանջմունքների մշտադիտարկման գործունեության իրականացման համար՝ ներառյալ նրանց շրջանում հետազոտությունները, ուսումնասիրությունները և հարցումները: Պատասխանատու է նաև այն հետազոտությունների համար, որոնք միտված են օգտագործողների

խնդիրների, նպատակների բացահայտմանը և այլն:

Վարկանիշի հետ կապված հետազոտությունները միտված են բացահայտելու առկա կամ հնարավոր օգտագործողների շրջանում ԱՐՄՍՍԱՏ-ի դիրքի նվազման կամ աճման միտումների վերաբերյալ արդյունքներ: Այսպիսի ուսումնասիրությունները չափազանց կարևոր են ԱՐՄՍՍԱՏ-ի հետագա գործունեության բարելավման աշխատանքների համար:

Ստորաբաժանումը համակարգում է ԱՐՄՍՍԱՏ-ի գործունեության պատշաճ լուսաբանման կազմակերպման նպատակով համապատասխան ստորաբաժանումներից անհրաժեշտ տեղեկությունների և նյութերի հավաքումը, ամփոփում և վերլուծում է ԱՐՄՍՍԱՏ-ի գործունեության ոլորտին առնչվող զանգվածային լրատվության միջոցների նյութերը: Ծանուցում է ԱՐՄՍՍԱՏ-ի նախագահին, Գլխավոր քարտուղարին և այլ պաշտոնատար անձանց՝ զանգվածային լրատվության միջոցներում տեղ գտած ԱՐՄՍՍԱՏ-ին առնչվող նյութերի մասին:

Ապահովում է ԱՐՄՍՍԱՏ-ում լրագրողների հավատարմագրումը, ԱՐՄՍՍԱՏ-ի նախագահի, նախագահի տեղակալի, Խորհրդի անդամների, Գլխավոր քարտուղարի և այլ պաշտոնատար անձանց մամուլի ասուլիսների, հարցազրույցների, ճեպազրույցների, հասարակական հետաքրքրություն ներկայացնող թեմաների վերաբերյալ հայտարարությունների կազմակերպումն ու անցկացումը և այլն:

5.2.ԱՐՄՍՍԱՏ-ի բաց գրադարան

Վիճակագրական տեղեկատվության տարածման ստորաբաժանումն իր մեջ ներառում է նաև ԱՐՄՍՍԱՏ-ի բաց գրադարանը: Այն գործում է 9:00-18:00-ը (փակ է տոն օրերին և ոչ աշխատանքային օրերին):

Գրադարանում օգտագործողներն իրենց տրամադրության տակ պետք է ունենան համացանցին միացած առնվազն 2 համակարգիչ:

Գրադարանավարն իրականացնում է ԱՐՄՍՍԱՏ-ի գրադարան մուտք եղած նոր գրականության հաշվառումը, դրանց մուտքագրումը գրանցամատյանում և համակարգչում, վարում է գրադարանում առկա գրականության գրանցամատյանը և համակարգչում դրանց բաշխումն ու դասակարգումը:

Գրադարանավարը Խորհրդի անդամներին, Գլխավոր քարտուղարին և նրա տեղակալին, ԱՐՄՍՍԱՏ-ի համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին ծանոթացնում է ստացված նոր գրականությունը, վարում հաշվառում, իրականացնում է գրադարան այցելուների սպասարկումը և վարում նրանց հաշվառումը:

Տարեկան ծրագրում ներառված վիճակագրական բոլոր հրապարակումների թղթային (տպագիր) օրինակներն առկա են ԱՐՄՍՍԱՏ-ի բաց գրադարանում:

5.3.ԱՐՄՍՍԱՏ-ի վիճակագրական հրատարակությունների պահպանում, ԱՐՄՍՍԱՏ-ի արխիվ

ԱՐՄՍՍԱՏ-ի արխիվում մշտապես պահպանվում են ԱՐՄՍՍԱՏ-ի վիճակագրական հրատարակությունների օրինակները, որոնք առկա են նաև Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպությունում, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Մշակութային արժեքների պահպանության գործակալությունում և ՀՀ ազգային գրադարանում:

Միաժամանակ, ԱՐՄՍՍԱՏ-ի վիճակագրական բոլոր հրատարակությունները, սահմանված կարգով, տեղադրվում են համացանցում, մշտապես պահպանվում ԱՐՄՍՍԱՏ-ի բաց գրադարանում և արխիվում (ներառյալ՝ ԱՐՄՍՍԱՏ-ի էլեկտրոնային արխիվում):

6. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՊԱՏՈՒՀԱՆ

6.1. ԱՐՄՍՍԱՏ-ի տեղեկատվական կենտրոն-ընդունարան

Ընդունելության պատուհանը (ԱՐՄՍՍԱՏ-ի տեղեկատվական կենտրոն-ընդունարանը) ապահովում է ԱՐՄՍՍԱՏ-ին հասցեագրված թղթային (տպագիր) դիմումների, նամակների, հաշվետվությունների և այլ փաստաթղթերի ընդունումը տեղեկատվական կենտրոն-ընդունարանում:

Ընդունելության պատուհանի աշխատակիցը կազմակերպում է քաղաքացիների ընդունելության ձևակերպումները՝ տալիս է մուտքի թույլտվություն: Նախապատրաստում է հաշվետվություններ ԱՐՄՍՍԱՏ այցելած քաղաքացիների, այցելությունների նպատակների, այցելությունների քանակի մասին՝ ԱՐՄՍՍԱՏ-ի Գլխավոր քարտուղարին ներկայացնելու նպատակով:

Աշխատակիցը սահմանված կարգով ապահովում է ԱՐՄՍՍԱՏ-ում հավատարմագրված լրագրողների մուտքն ԱՐՄՍՍԱՏ, կազմակերպում նրանց, պաշտոնատար անձանց և անհատ քաղաքացիների այցելությունները ԱՐՄՍՍԱՏ-ի համապատասխան ստորաբաժանումներ:

7.ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄՍՍԱՏ-ը պարտավորված է բոլոր օգտագործողներին տրամադրել տեղեկատվություն և տվյալներ Եվրոստատի կայքէջից՝ անվճար հիմունքներով:

Օգտագործողներին տեղեկատվությունը պետք է տրամադրվի հիմնվելով Եվրոստատի պաշտոնական կայքում տրված տեղեկատվության հիման վրա:

Օգտագործողների պահանջի դեպքում, եթե համապատասխան տեղեկատվությունը ԱՐՄՍՍԱՏ-ի պաշտոնական կայքում բացակայում է, ապա պահանջը ուղարկվում է Եվրոստատ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Օգտակար է այն վիճակագրությունը, որից օգտվում են: Վիճակագրական տվյալներն արխիվի համար չեն հրապարակվում: Եթե վիճակագրությունը չի հանդիսանում որոշումների ընդունման գործիք և չի օգնում հասկանալ տեղի ունեցող երևույթները, այն չի կատարում իր հիմնական գործունեությունը:

Վիճակագրության վերակառուցման առաջնահերթ ուղղություններից մեկը վիճակագրական տեղեկատվության տարածման փորձի և դրա վարման քաղաքականության նորացումն է ու այդ բնագավառում նոր մոտեցումների կիրառումը:

ԱՐՄՍՍԱՏ-ը պետք է շարունակի վիճակագրության միջազգայնորեն ընդունված սկզբունքների պահպանման համատեքստում վիճակագրության ինստիտուցիոնալ վերափոխման գործընթացները՝ մշտապես բավարարելով օգտագործողների պահանջարկն առավել ամբողջական և օպերատիվ:

Վիճակագրական տեղեկատվությունը, ինչպես ցանկացած ապրանք, պետք է համապատասխանի քանակական և որակական չափանիշների ամբողջական շարքի պահանջներին (բովանդակությունից մինչև տարածումը): Տեղեկատվության ավելի արագ տարածումը կարող է հասանելի լինել միայն ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմամբ:

Օգտագործողների տարբեր խմբերն ունեն տարբեր պահանջմունքներ և միատեսակ ծառայությունների մատուցումը բոլոր տեսանկյուններից թերի ու անբավարար կլինի:

Եթե վիճակագիրը չի ճանաչում օգտագործողին, ապա նա չի հասկանա, թե բավարարվա՞ծ է արդյոք նա մատուցված ծառայություններից, չի իմանա վիճակագրությունում առկա որևէ անբավարար ծառայության մասին և դժվար կլինի զարգացնել այն ուղղությունը, որը կհամապատասխանի նրանց տեղեկատվական կարիքներին և պահանջմունքին:

ԱՐՄՍՍԱՏ-ը գործում է վիճակագրական տեղեկատվության օգտագործողների համար, հաստատում է արդյունավետ կապեր՝(ԱՐՄՍՍԱՏ տեղեկատվության ուղղակի կամ անուղղակի տարածման նպատակին հասնելու համար):

ԱՐՄՍՍԱՏ-ի համար լրատվամիջոցների հետ կապերը որոշիչ են, քանի որ հենց նրանք են պաշտոնական վիճակագրության հիմնական օգտագործողները և կարևոր օղակն են ԱՐՄՍՍԱՏ-ի և պաշտոնական վիճակագրության մյուս օգտագործողների միջև, վիճակագրական տվյալների և հիմնական հանրության միջև: Փաստացի, լրատվամիջոցները հանրությանը պաշտոնական վիճակագրության արդյունքները փոխանցելու հիմնական միջոցներից մեկն են, ուստի շատ կարևոր է նրանց հետ բարի-դրացիական հարաբերությունների պահպանումը:»